

Հ. Յ. Գ.
ՄԱՍԼՈՅ ԴԻԻԱՆ

ԴԻՐՈՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

1904

„Droschak“
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak“
GENÈVE (Suisse)


„ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Կ Ի Ի Ո Ղ Ս Ա Ս Ո Ւ Ն

Տ Ա Ս Ն Ա Մ Ե Ա Կ Ի Դ Է Պ Ք Ե Ր Ը

ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԽԱԿԱՆՆԵՐԻ ԵՒ ԹԻՒՐԹ ԶՕՐԹԻ ԸՆԴՀԱՐՈՒՍԸ

ՀԱՅՆԵՐԻ ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ. ԹՐԲԱԿԱՆ ԲՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ



Հինդ հաղար մարդկային դիակներ, տասնևութ գիւղ աւերած, հաղար տուն կրակի ճարակ, — այդ էր բըւնապետութեան հրաշակերտած պատկերը սրանից տասն տարի առաջ, երբ Ծովասարի շուրջը առաջին անգամ ծածանեց ազատութեան դրօշակը, ամենամեծ սպառնալիքը սուլթանական ապահովութեան:

Եւ այդ պատկերի դիմաց՝ Երլբըզ-Քիօսքի մենաւորը, դիւական ժպիտը երեսին, սկիւրացած ձեռքերը շփեց և այս խօսքերը մրմնջաց՝ «Լաւ խրատ եղաւ. էլ չեն երազի և երբէք չեն համարձակի»:

Տասն տարի անցաւ: Քըւֆըն-Քարի ստորոտներին նորից ծլեց ազատութեան շիթը: Մնւած զոհերի արեան վտակներով ու ցօղած կենդանի մնացորդների արտասուքի ծղծյան կաթիլներով, նա էլի մի անգամ տւեց իր պտուղները, — քաջերի այն խումբը, որ ազատութեան տաղերը շրթունքներին, կուրծք տւեց թշնամուն:

Ու այս անգամ աւելի համարձակ, քան թէ առաջ աւելի վճռական ու կազմակերպւած: Մի օր լեռների լանջին թաւած, միւս օրը դաշտի գիւղերի «հաւարին» հասած, մի այլ անգամ՝ քիւրդ հրոսակների դէմ ծառացած՝ յեղափոխական քաջարի մարտիկները, թէև փոքրաթիւ, թշնամու ահագին բանակի համեմատութեամբ, անվեհերութեան չքնաղ ապացոյցներ տւեցին: Եւ կուէ ընթացքում՝ հայոց պատրիարքարանի միջոցով սկսած միամիտ բանակցութիւնները, Բիթլիզի վալիի արած խաբէրայական յայտարարութիւնները, սուլթանի անուանից բեքայական յայտարարութիւնները, առլթանի անուանից եկած սին առաջարկները — կառավարչական բարեմտութեան նշաններ չէին, այլ բացայայտ փաստեր այն խորունկ երկիւղի, որ սաստնեան խմբերը ներշնչում են մեծաթիւ հակառակորդին...

Ստոր, զաղէր հակառակորդ: Նա մնաց նոյնը, ինչ տասն տարի առաջ էր. — երկչոտ, միշտ փախուստի տրամադիր բաց դաշտում, ճակատ առ ճակատ հայ զինւորի դիմաց,

և արիւնարբու, անխիղճ ու վայրագ անմեղների հանդէպ՝ անօգնական գիւղերում, կանանց և երեխաների դիմաց: Հրդեհ, կոտորած, խողխողանք, բռնաբարութիւն — ահա նրա միակ պատասխանը հայ բազմիկներին, նրան արժանի միակ վրէժը՝ հայ յեղափոխութեան...

Այդ «վրէժը» անզօր եղաւ չորացնելու այն ծիլը, որ բուսաւ Տալուրիկի աղատաշունչ օդում և արդէն իր տասնամեակը բոլորեց: Նա աւելի ևս անզօր է այսօր, երբ ստրուկ հայերին ժառանգել են կուռ ող զաւակներ, կրակի և փոթորիկի միջից անցած, տրամադիր մինչև վերջ շարունակելու աղատագրական աշխատանքը:

Նախորդների արիւնը յաջորդների ոգևորութեան աղբիւրն է... Ազատութեան արշաւանքը դարձեալ մի անգամ անցնում է տանջւած գիւղերի մօտով, այն ձորերի վըայից, ուր այնքան հերոսների դիակներն են ընկած, միշտ գլուխը բարձր, միշտ յոյսն ու հաւատը ճակատին, միշտ աչքերը նպատակին յառած:

Թող չխորխտայ թշնամին: ԶԳ-ի Սասունը իր ներկայ տասնամեակին դիմաւորեց ոչ իբրև ստրուկ, որպէս թըւնամին էր կարծում, և կամ ուժասպառ, ինչպէս Եւրօպան էր ենթադրում, այլ իբրև կուռ ող, յեղափոխական կրակը կրծքում և զէնքը ձեռքին:

Ապրիլ-մայիսեան նորագոյն դէպքերը, որոնց նկարագրութիւն բերում ենք ներքև, թեյադրում են աւելի գրութիւն բերում ենք ներքև, թեյադրում են աւելի պինդ բունել կուէ զէնքը և շարունակել նախագծած ուղին, վստահ, հաւատքով, խորապէս համոզւած, որ «սարերի յետևը չէ» այն գեղեցիկ օրը, երբ տանջւած հայութիւնը կարող կը լինի տօնել տարեդարձը ոչ թէ ստրկութեան և արիւնի, այլ տարեդարձ ազատութեան, զինադադարի, սկիզբն ազատ Սասունի, ազատ Հայաստանի, ազատ փոքր-Վսիայի...

Յարգանք նորոգ նահատակներին:
Ողջոյն նրանց յաջորդներին:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

(ՍԵՓԱԿԱՆ)

ՄՈՒՇ, 4/17 մայիսի
(ԹԻՖԼԻՍԻ ՎՐԱՅՈՎ)

Մուշի դաշտի բոլոր հայ գիւղերը բռնւած են թիւրք կանոնաւոր զօրքերով և քրդերով, որոնք գործում են ամէն տեսակ ճնշումներ ու գաղանութիւններ: Քրիստոնեայ ազգաբնակութիւնը, ապաստան փնտրելով, խրամներով զինուում է դէպի Սասունի լեռները, որոնք շրջապատւած են զօրքերով ու բաշխօզուկներով:

Տեղի ունեցել են արդէն մի շարք արիւնահեղ կռիւներ սասունցիների ու կառավարչական ուժերի միջև:

Ապրիլի 12-ին (մարտ 30) սասունցիք կորովի կերպով յետ մղեցին թշնամուն, պատճառելով նրան մեծ կորուստներ:

Ապրիլի 10/23-ին Բիթլիզի վալին եկաւ մի քանի հազար կանոնաւոր զօրքով ու քրդերով, իրեն ուղեկից ունենալով Մուշի և Բիթլիզի հայ եպիսկոպոսներին: Չնայած եպիսկոպոսների ներկայութեան՝ Շէնքըը ենթարկեց զօրքերի յարձակման: Ապա վալին դիմեց դէպի Սէմալ: Այստեղ սասունցիները խմբապետ Հրայրի առաջնորդութեամբ յետ մղեցին նրան, սպանելով մի քանի տասնեակ զինւորներ և քրդեր: Այն ժամանակ, ապրիլի 12/25-ին, վալիի հրամանով Ս. Առաքելոց վանքի վանահայրը և Բիթլիզի ու Մուշի եպիսկոպոսները՝ հայոց պատրիարքի մի նամակով գնացին Սէմալ՝ յանձնարարութիւն ունենալով՝ հարկադրելու սասունցիներին անձնատուր լինել: Սակայն այդ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի խաբուսիկ միջոց, որովհետև ապրիլի 13/26-ին, նոյն այն միջոցին, երբ հայ խմբապետները իջնելով բարձունքներից, գնում էին դիմաւորելու յանձնաժողովին՝ նրա հետ Գեղաշէնում բանակցութիւններ սկսելու նպատակով, վալին հրաման արձակեց՝ յարձակում գործել սասունցիների վրայ, յանկարծակիի բերել նրանց և բռնել խմբապետներին:

Այդ ծրագիրը, սակայն, չհաջողեց, խմբապետները, ինչպէս և բնակիչները, կարողացան ժամանակին յետ քաշել և դիրքեր բռնել:

Զօրքերը, հալածելով բնակիչներին, գնացին Կէլիէ-կուզանի վրայ, ուր նրանք ընդհարում ունեցան հայ բնակիչների հետ, որոնք շտապով հասնելով բոլոր կողմերից՝ կարողացան աղողեցնել իրենց համախմբումը: Տեղի ունեցաւ մի արիւնահեղ կռիւ: Թիւրքերը յաղթուեցին և յետ մղեցին, թողնելով կռիւի դաշտի վրայ 160 մեռած, բազմաթիւ վերաւորներ և հրացաններ: Հայերից սպանուեցին 7 հոգի, որոնց թուում և խմբապետ Հր.Ա.ՅԲ. վերաւորւածները 8 են:

Ապրիլի 14/27-ին վալին ստացաւ նոր օգնական զօրք: Սպասուում է մի նոր ընդհարում հայերի և թիւրք զօրքերի միջև:

Մանրամասները նամակով:

ՈՒՐՄԻԱ, 4/17 մայիսի

Սասունի պաշարումը շարունակուում է: Թիւրքական զօրքերը՝ 7 վաշտով հիւսիսից և 5 վաշտով հարւակից՝ շրջապատել են երկիրը: Քրդական աշխրէթներ միացել են զօրքին: Հայկական խմբերը, ամրացած դիրքերում, վճռել են դիմադրութիւնը շարունակել, նկատի ունենալով Բիթլիզի վալիի խարբրայութիւնը: Ընկուզիակ, Արդիւու, Բո-

րախու, Տելաւէ, Կէլիէկընման գիւղերը սյրւած են: Անապաստան մնացած ժողովուրդը դիւլւած է Կէլի: Բիթլիզի վալին իբրև պատանդ՝ պահում է առաջնորդին և հայ ժողովուրդի ներկայացուցիչներին: Լուր կայ, որ քրդական մի ցեղապետ ստացել է սուլթանից մեծ գումար՝ հայկական ջարդ կազմելու համար: Վանի հայ ազգաբնակչութիւնը շատ անհանգիստ է Սասունի դէպքերի պատճառով, ինչպէս և կովկասեան սահմանագլխի հայութիւնը:

ԹԻՖԼԻՍ 5/18 մայիսի

Մարտի 28-ին պատկանելի ցեղին պատկանող քրդեր թալանել են Տալաւէ հայ գիւղը, ապա թուով 200 արշաւել են Կէլի հայ գիւղի վրայ: Սասունցիների հետ սկսել է կռիւ: Քրդերի ց ընկել են 25 մարդ, հայերից՝ 1:

ՄՈՒՇ, 12/25 մայիսի
(ԹԻՖԼԻՑԻ ԳԾՈՎ)

Մայիսի 3-ից սկսած մօտ 15 հազար թիւրք զինւորներ և քիւրդ աշխրէթներ՝ համաձայն կառավարչական կարգադրութեան, բռնութիւններ են կատարում:

Ժողովուրդը ապաստանել էր Կէլիէկուզան: Նա անկարող եղաւ միանալ Անդրանիկին և հայ կառող խմբերին, որոնք յետ քաշելով թիւրքաց մեծաքանակ զօրքի դիմաց՝ դիրք էին գրաւել անմատչելի լեռների վրա: Զօրքը շրջապատեց Կէլին և սկսեց կատաղի թնդանոթածութիւն:

Սասունի և Մուշի դաշտի միջև յարաբերութիւնները կտրւած են:

Աւելի քան 200 պառու կանայք, ողբալի վիճակի մէջ, բերել են Մուշ, հաւատացնելու համար, որ ազգաբնակչութիւնը չէ վնասուած:

Մուշի առաջնորդը և մեծամեծները, որոնց ստիպեցին ուղեկցել զօրքին՝ Սասուն գնալիս, բռնի միջոցների ազդեցութեան տակ ստորագրեցին սուլթանին ուղղած երախտագիտական մի ուղերձ: Գրանից յետոյ նրանց բերեցին Մուշ, որպէսզի նրանք վկայ չլինեն Կէլի թալանին և կոտորածին:

Սասունի դէպքերը կրկնուում են և Մուշի դաշտի վրայ: Բերդակ գիւղը պաշարեց և հրդեհի մատնեց զօրքի ձեռքով: Բնակիչները ենթարկեցին կոտորածի:

Երկրին սպանուում է սով, յարաբերութիւնները գաղթած լինելով:

Մուշի մէջ տիրում է սոսկում. կեանքը կանգ է առել: Ապաստում է ընդհանուր աղէտ:

Ֆրանսիական հիւպատոսը հասաւ:

ՍԱՍՈՒՆ, 12/25 մայիսի
(ԲԱԳՈՒՅ ՎՐԱՅՈՎ)

Մայիսի 3-ին (ապրիլ 20), մօտ 10,000 թիւրք զինւորներ, 15 թնդանոթներով, միացած 6 հազար քրդերի պաշարեցին և ուժակոծեցին Կէլիէկուզան. աւելի քան 100 ուումը պայթեց: Հայերը պահպանում են իրանց դիրքերը: Մայիսի 4-ին տեղի ունեցաւ նոր ուժակոծում.—200 ուումը աւերեց գիւղը: Գիշերը՝ տղամարդիկ բարձրացան Անտոբ լեռը, Անդրանիկի, Վահանի և Գեորգի ղեկավարութեամբ, տանելով մթերքները: Արական սեռից հայերի կորուստը աննշան է. սակայն խաղաղ և անվէն ժողովուրդը ենթարկեց կոտորածի: Այրւած են բազմաթիւ գիւղեր: Մի քանի հարիւր երեխաներ և հասակաւոր կանայք տարւեցին Մուշ, ենթարկեցին տանջանքի և բանտարկութեան: Հաղորդակցութիւնը Մուշի հետ ընդհատուած է:

ԹԱԻՐԻՁ, 14/27 մայիսի
(Հնդասերոպական զծով)

Ղանի մօտ ճանապարհորդ հայեր ենթարկեցին յարձակման քուրդ ու թիւրք զինւորների կողմից: Շատ մարդիկ են սպանւած: Ղզլախ գիւղը մասնակց աւերման: Իմ կղզում եկեղեցին աւերւեց և թալանի մասնակց:

Ե Ի Ր Օ Պ Ա Կ Ա Ն Թ Ե Ր Թ Ե Ր Ի Յ

Ղիննա, 20 ապրիլի

Պաշտօնական տեղեկութիւնների համեմատ՝ Սասունի շրջանում տեղի են ունեցել լուրջ կռիւներ զօրքերի և հայ ապստամբների միջև: Այս վերջինները թւում 2,000 եկած են մեծ մասամբ Ռուսաստանից և Պարսկաստանից: Կռիւները, անշուշտ, ծագել են այն պատճառով, որ ապստամբապետ Անդրանիկ մերժել է բանակցութեան մասնել տեղական իշխանութիւնների հետ՝ անձնատուր լինելու մասին: Զօրքերը ունեցել են 20 հոգի սպանւած և 23 վիրաւոր: Ապստամբների կորուստը յայտնի չէ: Տալուրիկի շրջանի 12 գիւղեր աւերւած են, յայտնի չէ՝ ապստամբների թէ քրդերի ձեռքով:

Կ. Պօլիս, 2 մայիսի

Սասունից եկած վերջին լուրերը հաղորդում են, որ քրդերը յարձակւած լինելով Սասունի մօտ գրտնուղ մի քանի գիւղերի վրայ՝ հայ յեղափոխականները խմբապետ Անդրանիկի առաջնորդութեամբ շտապով օգնութեան հասան իրենց հայրենակիցներին, ք շ ե Յ ի ն և կ ո տ ո Ր ե Յ ի ն բ ա Ղ մ ա թ ի ւ ք Ր Գ ե Ր:

Կ. Պօլիս, 5 մայիսի

Անգլիական դեսպանատունը, յորդորելով ընդհանուր քայլեր անել՝ Բիթլիզի վիլայեթում հայկական շարժման և քրդական բռնութիւնների մեծ ծաւալումը արգելելու համար, — Ֆրանսիական և ռուսական դեսպանները առաջարկել են իրենց կառավարութիւններին՝ հրահանգել տեղւոյն հիւպատոսներին՝ համապատասխան քայլեր անել թիւրքաց իշխանութիւնների հետ միասին: Այդ քայլերը պիտի արւէին արդէն և յետաձգւում են, որովհետև Բիթլիզի համար նշանակւած ռուսական հիւպատոսը մինչև օրս դեռ տեղ չէ հասել: Բայց քանի որ զինւորական գործողութիւնները արդէն սկսւած են՝ ռուսաց կողմից ուէ միջմատութիւն այլևս նպատակաշարժար չէ դիտւում: Սասնոյ շրջանում վերջին օրերս տեղի ունեցած կռիւների մասին ստոյգ տեղեկութիւններ չկան: Քրդերի մասնակցութիւնը այդ կռիւների մէջ՝ կասկածելի է թւում: Կէնջի միւթէսարիֆը մի քանի անգամ հեռագրել է, որ հայկական շարժման առիթով մահմեդականները շատ գրգռւած են և դժւար կըլինի արգելք լինել բռնի ճնշումներին:

Կ. Պօլիս, 6 մայիսի

Բիթլիզի վալին հաղորդում է տեղս ուղղած մէկ հեռագրի մէջ՝ որ նա գրաւել է Կէլիէկուզանը Սասունի շրջանում: Մի երկրորդ զօրագունդ, բաղկացած երկու վաշտից՝ դիմել է դէպի Տալուրիկ՝ պաշարելու Անդրանիկի ամուր բանակը:

Կ. Պօլիս, 8 մայիսի

Նորից ուղարկեցին եօթ վաշտ զօրք Սասնոյ լեռներում ապաստանած հայերի դէմ, որովհետև նրանց հրամանատար Անդրանիկը հրատարակում է անձնատուր լինելուց:

Կ. Պօլիս, 12 մայիսի

Թիւրքաց վկայութիւնների համեմատ՝ Սասնոյ շրջանի հայ յեղափոխականների ամուր դիրքերը մեծ մասամբ աւերւած են և ապստամբապետ Անդրանիկի համարեա բոլոր խմբերը ցրւած (°): Այժմ՝ հետամուտ են նրանց: Բիթլիզի և Մուշի հայ եպիսկոպոսները, որոնք ուղեկցում էին վալին՝ ապստամբապետ Անդրանիկին անձնատուր անելու նպատակով, տւել են հեռագրով իրենց հրատարակւոր, որ սակայն, պատրիարքը՝ ի նկատի ունելով այնտեղի կացութիւնը՝ չէ կամենում ընդունել:

Չանազան դեսպանատներ բարեկամական խորհուրդ են տւել Բ. Պրան՝ հրահանգել որ հայ յեղափոխական խմբերը միմեք լուր մաքրելու միջոցին՝ քրդերն ու զօրքերը անպայման խոյս տան ծայրայեղ միջոցներէրից, քանի որ կօմիտէն կարող է չտիպանցել ու շահագործել նրանց՝ անդրագոյն պրօպագանդի համար: Թիւրքաց վկայութիւնների համեմատ՝ մի հայ ապստամբապետ խումբ երևան է եկել Էրզրումի մօտ, մի ուրիշը՝ Ղանի մօտ:

Բաթում, 14 մայիսի

Բիթլիզից ստացւած տեղեկութիւնների համեմատ, 700 հոգի սպանւել են թիւրքերից և 900 հոգի հայերից (°): Նօրմալ կեանքը խանգարւած է: Կենսական միջոցների գները կրկնապատկւել են: Հայ ազգաբնակչութեան սպանում է սով: Չընայած դրան, հարկահանները շարունակում են շորթել և իշխանութիւնները ստիպում են բնակիչներին՝ ստորագրել գոհունակութեան ուղերձներ:

Կ. Պօլիս, 14 մայիսի

Թիւրք իշխանութիւնները դժգոհ են Բիթլիզի և Մուշի եպիսկոպոսներից, որովհետև նրանք չեն կամեցել ստորագրել վալին ձեռքով խմբապետ մի յայտարարութիւն, որի համեմատ՝ իբր թէ բռնութիւնները սկսւել են ոչ թէ քրդերի, այլ հայերի կողմից: Այդ պատճառով երկու եպիսկոպոսներն էլ հրատարական են տւել:

Կ. Պօլիս, 16 մայիսի

Բիթլիզի և Մուշի առաջնորդները, տեղոյն վալին և մի քանի հայ երեւելիներ բարձրացան Սասունի լեռը, յեղափոխականներին գտնելու և նրանց խորհուրդ տուլու, որ հրատարակեն որևէ ցոյցերից, քանի որ սուլթանը խոստացել է թող տալ նրանց ազատ հեռանալ, եթէ անձնատուր լինեն: — Բիթլիզից հաղորդւած լուրը՝ թէ պատկանիլի քիւրդ ցեղը Սասնոյ շրջանի հայ գիւղերի վրայ յարձակում գործելով՝ այրել է վեց գիւղ, — թիւրքերի կողմից հերքւում է, սակայն անհիմն չէ թւում: Յամենայն դէպս յարձակումներ արդէն տեւի են ունեցել խմբապետ Անդրանիկի մարդկանցից գրողված մի քանի գիւղերի վրայ: Արդեօք յարձակողները քրդերն են, թէ՛ զօրքերը, — այդ դժւար է ստուգել: Քրդերը շատ գրգռւած են Անդրանիկի գործողութիւններով և դժւար պիտի լինի սանձահարել նրանց:

Կ. Պօլիս, 17 մայիսի

Մուշի անգլիական ու ռուսական հիւպատոսները և Ղանի Ֆրանսիական հիւպատոսը հրաման ստացան իրենց կառավարութիւններից՝ համաձայնութեան գալ՝ քննութիւն սկսելու Բիթլիզի վիլայեթի կացութեան մասին:

Բիթլիզից ստացւած մասնաւոր տեղեկութիւնների համար:

մեմատ՝ Անդրանիկի խմբերը անհնարին է գտնել: Մուշի միւթէսարի՞ն մուսովները, Նշան էֆէնտին, գնացել է փնտրելու Անդրանիկին և բանակցելու նրա հետ անձնատուր լինելու պայմանների մասին:

Տեղիս թիւրքական շրջաններում պատմում են, որ բազմաթիւ հայ և քուրդ ընտանիքներ Մասունից և շրջականներից փախել են դէպի Մուշ, ազատելու համար հայկական խմբերի հալածանքներից (!): Նոյն շրջաններում այն կարծիքի են՝ որ օտար հիւպատոսների ներկայութիւնը Մուշում կարող է խրախուսել հայ խռովարարներին:

Ը Ն Գ Կ Ա Ր Ո Ւ Մ Ն Ե Ր Ի Ծ Ո Ւ Ր Զ Ը

(Նամակներով)

Սասուն, 5 մարտ

Մեր վիճակը հետոհետէ կրիտիքական կը դառնայ: Յունանի դէպքի մասին ձեզ գրւած է երկար, ինչպէս նաև Տարբեկայ և Հեղինի գործերու մասին: Կառավարութիւնը իր միջոցները ներածին չափով՝ կ'աշխատի մեզ շրջապատել ամէն կողմէ: Երկու կէտերու վրայ դիրքեր բռնած ենք: Ամէն օր կառավարութիւնը կը մօտենայ, մաս-մաս զօրքեր կը բերէ Սղերդէն, Տիգրանակերտէն: Զօրքերը լցւած են մեզ մօտիկ տեղեր, Սաղտուն, Փասուր, Փարկա, Ղայսեր, Կըլսենք, որ պիտի գան նաև Պօզկանք և Կէլիէմուր: Իսկ եթէ հասան Կարինէն և Խարբերդէն սպասւած զօրքերը—մեր լսածին նայելով— կառավարութիւնը զանոնք պիտի լեցնէ Գաշաի գիւղերը և մեր անջքերը փակէ, ատով մեզ դաշտէն անջատելով բոլորովին:

Սոյաբէ կամ ջան-բէզար կոչւածները՝ խուճ-խուճ ման կուգան Գաշաի գիւղերը: Մուշի մէջ պահեստի ղինւորները հաւաքեցին. կը լսւի որ համիդիէներ ալ պիտի կանչեն: Կառավարութիւնը իր պաշտօնեաներով շէյխերով ու մօլլաներով կը ջանայ իրարու թշնամի քիւրդ ցեղերը հաշտեցնել և բոլորը միացուցած՝ մեզ դէմ գրգռել:

Եթէ ձիւնը չվերցած թշնամութիւնները և կուրը սկսի, բաւական դժուար կ'ըլլայ մեր գործը. իսկ եթէ խաղաղութեամբ հասնինք մի ն չև մայիս այն ատեն, ինչպէս կ'ըսեն, Ասուած ողորմած է...

Սասուն, 8 մարտ

Կառավարութեան շարժումներէն կը կասկածիք, որ մօտերս յարձակում կը գործէ և կըսպասենք ընդհարումի մը, բայց օրերու յանկարծական խտուրթիւններ, ձիւնի նոր տարափներ քանի մը օրով յետաձգեցին այդ կասկածներու իրականացումը:

Այս օրերս տեղեկութիւն առանք, որ Մսուրը Շիբլի, որ ժամանակին Մասնոյ քննիչ յանձնաժողովի անդամ էր, հայաքնակ հինգ նահանգներու վրայ անգլիական հիւպատոս կարգւած է: Արդէն այդ նահանգներու մէջ անգլիական կառավարութիւնը իր հիւպատոսները ունի: Այս նոր անւանումը ինչի՞ հետեանք է, կամ Շիբլին ինչ նոր պաշտօն ունի — բան մը, որ մեզ շատ կը հետաքրքրէ: Բարձրագոյն կառավարութիւնը կ'ուզէ շատ զօրք ղրկել Մուշ, բայց տեղը գտնւած զօրքերը արդէն վերին աստիճանի նեղ գրութեան մէջ են: Աւստի Մուշի կառա-

վարիչ փաշան հաղորդել է ուր որ պէտքն է, թէ իրենք չեն կարող նոր զօրքերը պահել, քանի որ արդէն եղածները սոված ու մերկ են և խնդրել է որ եկող զօրքերը ուտելիքնին հետերնին բերին:

Շատ մը թիւրք ղինւորներ փախաւ ունին փախչելու և մեզ մօտ դալու: Արդէն չառու մը և երեք ղինւորներ իրենց զէնքերով հասած են մեզ մօտ: Աւրիշներ ալ պիտի գան: Եկած զօրքերը շատ խեղճ վիճակի մէջ են: Կուրներ սկսելուն պէս, սակայն, ատոնց արտասահման պիտի ղրկենք. կրնայ պատահիլ, որ կուրի ատեն մեզ համար վտանգաւոր ըլլան:

Մուշ, 27 մարտ

Կառավարութիւնը ամսոյս 24-ին բանտարկեց տեղուս առաջնորդը և ազգային ժողովի 12 անդամները՝ Յունան գիւղի աւերման աւթիւ սուլթանին ղրկած բողոքագրին պատճառաւ:

Կառավարութիւնը Յունանցիներու բերնէն կեղծ հանրագիր մը պատրաստած է՝ իրողութիւնները հերքող և բռնի ստորագրել կուտայ Մշոյ դաշտի գիւղացիներուն:

Չերբակալութիւնները անհամար են: Մուշը շրջապատւած է 5-6,000 զօրքերով: Կարինէն, Վանէն 2 գունդ զօրք հասան և զետեղւեցան Առաքիլոց, Սբ. Յովհաննու, Սբ. Կարապետի վանքերը և Զրիկ, Խասգեղ, Կառնէն, Աւինջվանք և Սուլուի գիւղերը: Մէկ քանի գիւղերու մէջ ալ տեղ կը պատրաստի գալիք ղինւորներու համար:

Մուշ, 27 մարտ

Ամսոյ 24-ին, աւագ շաբթու չորեքշաբթի օրը, բարբարոս կառավարութիւնը, անշուշտ, սուլթանի իրատեով, հարցաքննութեան կոչեց հայոց առաջնորդը, Գնէլ վարդապետ Գալէմքեարեան և խառն ժողովոյ 12 անդամներն, 6 կղերականք և 6 աշխարհականք, սակէ առաջ Յունան գիւղի ծանօթ դէպքին աւթիւ՝ փետրուար 22 թւականաւ կայսերական պալատ ուղղած բողոքագրին համար: Չանոնք հարցաքննելով՝ բանտարկեցին: Ինչպէս կ'երևի, յունանցիներու կողմէ կեղծ հանրագրութիւններ պատրաստելու նպատակով ձեռք առնւած է այդ միջոցը՝ Հիմա գիւղի ուսնէրն (գիւղապետ) կը հաւաքէ, որպէս զի խաբէութեամբ և կամ բռնութեան ներքև հանրագրութիւն առնէ թէ երկիրը խաղաղ է, ո՞վ գիտէ ինչ թոյններով լեցուն գրութիւն մը հեղինակած է: Չերբակալութիւններ գեռ պիտի շարունակէ, քաղաքն արդէն չորս կողմէն պաշարման վիճակի մէջ գրած է, մօտերս 10-15 թապաւր զօրքերով Սասունն ալ պաշարման ենթարկուց, և, ինչպէս կըստուգւի, ահագին զօրաց փոխադրութիւններ պիտի ըլլան հոս:

Սասուն, 28 մարտ

Այս շաբթի պատրիարքարանէն պաշտօնափիր մը հասած է Մշոյ առաջնորդին սա իմաստով. «Իմանալով Տարձոնոյ հայ ժողովրդի ցաւալի կացութիւնը և անոր սպառնացող վտանգը, դիմեցի սուլթանին: Սուլթանը խոստացաւ ամէն կերպ պաշտպանել հայ ժողովուրդը և երկիրը հետոհետէ բարելաւել պայմանով որ Սասուն սպաստանած և բնակած յեղափոխականները յանձնւին: Այս նպատակով կառավարութեան և առաջնորդարանի կողմէն պատգամաւորներ պիտի գնան յեղափոխականաց հետ բանակցելու»: Կը յաւելու նաև, որ եթէ առաջի բանակցո-

Թեամբ չհամաձայններ, պէտք է լուր տրուի պատրիարքարան, որպէս զի երկրորդ բանակցութիւն մը պատրաստէ: Յեղափոխական շրջանները այդ պաշտօնագիրն, իհարկէ, ինկատի առնելու տրամադրութիւն չ'ունին բնաւին:

Սասուն, 7 ապրիլ

Հաւանորէն ընդունած կ'ըլլաք Յ1 մարտ Թաւիիր նամակը, որուն մէջ համառօտակի գրած էի նոյն օրը պատահած կուրի մասին: Իրերը մինչև այս րոպէն նոյն դրութեան մէջ են, բայց մօտիկ ապագան սպառնալից կը թուի: Այդ փառաւոր ճակատամարտը, որ անգամ մը ևս վեր հանեց Ֆէդայու և սասունցոց պատմական կտրձութիւնը, մեծ սարսափ թողեց ամբողջ քրդութեան վրայ: Թիւրք զօրքերը իրենց զօրանոցներու մէջ դողացին, ասոր հետ մէկտեղ նաև գրգռեց անոնց գայրոյթն ու վրէժխնդրութիւնը: Ամբողջ շաբաթ է մը իվեր հաւար ձգած են չորս կողմ, և պատըգանցի, հազէտանցի, սուրուիցի և այլ աշիրէթներ խուռն բազմութեամբ կը հաւաքին Շէն: Հրացանի ձայներ միշտ կը լսին այն կողմեր: Օրէօր արշաւանքներու կըսպասենք: Ղզաղաձէն մաս մը զօրք ռազմամթերքով հանած են, անշուշտ եղածներուն թե ու թիկունք ըլլալու և օր մըն ալ ըսելու թէ, «մենք գնացինք խաղաղացնելու, բայց չյաշողեցանք»:

Մշոյ իսլամ տարրը, որ միշտ առիթի մը կըսպասէ թէ քաղքի և թէ դաշտի հայերը կոտորելու և թանելու, վերստին յուզեցաւ: Գուժարուններ տեղի կ'ունենան... Կառավարութիւնն ալ գործի սկսաւ. անմիջապէս պակսիմաթներ եփել սկսաւ և զօրաց չարուիները պատուատեց, յարձակում գործելու նպատակով: Քրդերը բողոքելու գացեր են կառավարութեանը այն ալ պատասխաններ է՝ «Միթէ՞ մենք ձեզի ըսինք, որ 2-300 մարդով երթաք Ֆէդայիներու և Սասնոյ վրայ»: Ուրախալի է որ, թէ կառավարութիւնը և թէ իսլամ տարրը կը խոստովանեն, թէ քրդերն են նախապատճառը Տալաէի կուրին:

Այդ փառաւոր ճակատամարտի մէջ Յ1 քիւրդ սպանուեր են և շատերն ալ վիրաւորուեր: Շէնքըցի երկու հայ վիրաւորները լաւանալու վրայ են: Մուրադ և ընկերներ առիւծի պէս կուժան են: Տեղացիք շատ կը գովեն զՄուրադ:

Բաղէշի կուսակալը ապրիլի 5-ին հասել է Մուշ: Իսլամ տարրը, շէյխերով, իմամներով ներկայացեր և փնդրեր է, որ թէ կառավարութիւնը կամենայ, իրենք կարող են մէկէն ջնջել ամբողջ հայութիւնը: Կուսակալը անոնց գլխաւորները տարեր է իր բնակարան, թէ ինչ են խօսեր, ինչ խորհրդեր — չենք գիտեր:

Կուսակալը կը ջանայ սիրաշահել հայոց առաջնորդը և գլխաւորները, անոնց բերնէն շնորհակալութեան ուղերձ մը փրցնելու համար:

Ատանգը մէկ կողմէն չէ, որ կըսպանայ մեզ խիանցի քիւրդերն ալ, բագրանցիներն ալ իրար քով կը հաւաքուին և կըսպառնան յարձակիլ Իշխնձորի և Տալուրիկի վրայ: Քիւրդերու այս սպառնական ձեռնարկներէ՝ անոնց մերձուոր եղած հայ գիւղեր վառեցին իրենց տուններ և քաջակցան Սասուն: Այսպէս ապրիլ 5-ին վառեցին Անկուզնակ և Արծկոնք գիւղերը և ժողովուրդը լքեցեցաւ կուզնակ և Արծկոնք գիւղերը և ժողովուրդը լքեցեցաւ: Ապրիլ 6-ին վառեցին Բորսիսու և հարեան Իշխնձոր: Ապրիլ 6-ին վառեցին Գորսիսու և հարեան գիւղ մը ու բնակիչներով քաջակցան Տալուրիկ: Պօզըգանց մէջ ալ զօրք է գացեր, այն կողմէ ալ կասկած կայ:

Ապրիլ 6-ին վառեցին նաև կրմաւ և Ջէյնէկցիք գիւղեր և բնակիչք հաւաքեցան Տարբի: Հետո՞հետո՞ իրար վրայ կը սեղմուին. չորս կողմէն եկողներ շատ կան, բայց սովէ կը վախնանք: Ժողովուրդին աշնանէ իվեր արգելած է Մուշ երթալը: Առանց Մուշ երթալու դժուար է ապրել հաց պակաս է.

Սովը մեծ աւերումներ պիտի գործէ:

Առայժմ հայոց ուժեր բաժնուած են երեք կէտերու վրայ — Շէնքը, Տարբի և Իշխնձոր: Կեդրոնատեղին պիտի ըլլայ Կէլին: Տալուրիկէն օգնութիւն կը պահանջեն: Իեւ գիծերը բաց են և հայերը անհամբեր կըսպասեն Պուրակէն գալիք ուժերուն:

Մուշ, 11 ապրիլ

Յունան դիւղի դէպքի ամփոփումը տեղւոյս առաջնորդը խառն ժողովոյ հետ միասին սուլթանին տեղեկագրած ըլլալուն և միւս կողմէ եւրօպական թերթերու մէջ երևցած ըլլալուն համար՝ սուլթանը խիստ հրաման է արձակել: Եւ իբրև ատոր հետեանք՝ աւագ չորեքշաբթին բանտարկեցին առաջնորդը, կրօնական և քաղաքական ժողովոյ բոլոր անդամները: Մեծ յուզում և տրլութիւն տիրեց ամբողջ Մշոյ և շրջականերու վրայ: Բանտարկեանքը մինչև Զատիկ կիրակի գիշեր բանտ մնացին. գրեթէ ամբողջ քաղաք մեռած էր: Անոնք բանտարկած ժամանակ մի հեռագիր տրուեցաւ պատրիարքին, որը այդ հեռագրի հետեանք պալատ կերթայ, կը խնդրէ սուլթանին և նա ալ ներում կ'ընէ ատոնց, որպէս թէ ոճրագործ են: Չմոռանանք ըսելու, որ ժամագրամ Ատիլային յանձնուած էր ատոնց հարցաքննութիւնը և որոշուած է եղել սքսորեր:

Կրօնական ժողովոյ անդամներն են՝ Վահան վարդ. երիցեան, Յ. քաջ. Տէր Յովհաննէս սեան, Յ. Յովհաննէս, Յ. Մուշեղ, Յ. Սահակ և Յ. Եղիշէ քահանաները: Քաղաքական ժողովոյ անդամներն են՝ Սէրուէն եան, Նազարէթ էֆէնտի, Սահակեան Մարտիրոս աղա, Բդէեան Մ. Կարապետ, Ջուլիկեան, Գասպար, Մովսիսեան Պօղոս և Ջրեանց Արմենակ աղան:

Մուշ, 11 ապրիլ

Յեղափոխականներու և քրդաց առաջին ընդհարումը (վերջինները կառավարութեան դրոյմամբ) տեղի ունեցաւ նախորդ ամսու վերջին օրերուն մէջ, ձիջլ Ս. Յառութեան օրը: Առաջին առթիւ մերինները կ'զգուշարութեան օրը: Առաջին առթիւ մերինները կ'զգուշարութեան հետ բաղխում ունենալէ, իրենց տրուած հրահանգներն ու հրամանները ի շարք չգործածելու համար: Երբ նեղ կը մնան՝ կըստիպին իրենք ալ գնդակով պատասխանել և յետ կը նահանջեն: Իրենցմէ մոկունքի ԽՍՐՍ կըսպանուի, երկուքն ալ կը վիրաւորուին: Իսկ քրդերէն մօտ 40 հոգի սպանեալ և վիրաւոր:

Այս դէպքին վրայ կառավարութիւնն ու իսլամութիւնը գազանացած՝ անմիջապէս հրահանգ ղըկեց բոլոր քիւրդ աշիրէթներուն: Ատոնք ամէնքն ալ սուտ բազմութեամբ մը փութացին հաւաքելու խուճաքէ քառակի Շէն լաւած գիւղը, մերիններէն 4 ժամ հեռի նոյնը ըրին Շէն լաւած գիւղը, մերիններէն 4 ժամ հեռի նոյնը ըրին չորս կողմէն թէ քրդեր և թէ Տիգրանակերտէն ու Ալէքսնէն չորս կողմէն թէ քրդեր արդէն կանխաւ եկած էին: Բասանող զօրքեր, որոնք արդէն կանխաւ եկած էին: Բասանող զօրքեր, որոնք արդէն կանխաւ եկած էին: Բասանող զօրքեր, որոնք արդէն կանխաւ եկած էին: Բասանող զօրքեր, որոնք արդէն կանխաւ եկած էին: Բասանող զօրքեր, որոնք արդէն կանխաւ եկած էին:

էր Բաղէշի հայ իտարէի երկու անդամներ, պաշ միւտիր ումուժին, հարցաքննիչն էլն: Երկու օր առաջ կուսակալը խմբագրելով ինքնագով մի հանրագրութիւն, տեղական խումբ պաշտօնէից քննել աւեց և կանչելով Բաղէշի և տեղոյս առաջնորդներն ու վարչութեան անդամներ՝ ճնշումներով պահանջեց, որ իրենք ալ կնքեն այդ հանրագրութիւնը: Հանրագրութեան մէջ աււած էր որ բանակցութեան մասն յեղափոխականներու հետ, որոնք «աւազակներ և իշխանութեան հանդէպ խառնակիչներ» են: Առաջնորդը և հայ վարչական անդամները բացարձակ կերպով կը մերժեն կնքել: ասոր վրայ կուսակալը վայրացած, երէկ, ապրիլ 10-ին, ժամը 9¹/₂-ին, առաջնորդներն ու ժողովոց անդամներ, բ ու ն ի կ ե ր պ ո վ ձիերու վրայ նստեցնելով Սասուն բարձրացաւ, հինգ թաբուր զօրքով, որպէս զի հոն իր խմբագրած հանրագրութիւնը բռնի կ'ը ե լ տ ա լ ո վ անմիջապէս քրդերով և զօրքերով յարձակում կատարէ և ումբակոծէ:

Մուշ, 12 ապրիլ

Տարօնոյ և Սասնոյ աշխարհ յուզումնքի մէջ է և հայ ժողովուրդ արեան պատանք հագած՝ թշնամուն կը նայի: Արիւնարբուններով լեցուցած է Մուշ, գիւղեր ու լեռներ:

Մարտ 30-ին սարսափելի կռիւ մը ծագեցաւ Սասնոյ գաւառի Աէլիկէլնմանի մէջ: Մուրադ, Իսօն և Իսրայէլ գնացած էին հոն՝ հայ ընտանիքներ անկէ փոխարդելու համար: Պատրկանցի քիւրդերը, 400 հոգիէ բաղկացեալ, կը յարձակին անոնց վրայ: Արսկսի կռիւ: 32 քիւրդ կրսպանւին և 20-էն աւելի կը վիրաւորուին, իսկ հայ քաջերէն միմիայն մոկուեցի ԽՄԲՅԷԼ կը նահատակուի և երկու շէնքքցի տղայ կը վիրաւորուին:

Այս լուրը ծանօթ մօլա Ապտիւլայի ձեռքով կը հեռագրուի Մշոյ կառավարչին և Բաղէշի կուսակալին: Մշոյ կառավարութիւնը հազարէն աւելի հեծեալ ոստիկաններ հանեց, հաւաքեց քիւրդ ցեղապետներ և քիւրդեր 1,500-էն աւելի: Իսկ կուսակալը 4,000 զինուոր, վեց թնդանօթ, Բաղէշի և Մուշի առաջնորդները, քաղաքական ժողովոյ 12 անդամներով Խզլաղաճի և Քիւրդ-մէյտանի ճանապարհով ուղղակի Խոզմայ լեռան վոյսով Շէնքք ու Սէմալ գիւղերը գնացին: Տիգրանակերտի կողմէն ալ Հազրօ գիւղաքաղաքի Սէվտին պէյ և Սլիվանայ Հաճի Ռաշտ աղան եկան՝ ամէն մէկ հազարաւոր զինեալներով: Սասնոյ և Խուլբայ գաւառները չորս կողմէն պաշարած են:

Այս առաւօտ նամակ առինք քաջ Հրայրէն, որով կը գրէր թէ ահեղ կռիւ մը ծագած է երէկ, ապրիլ 11-ին, որ առաւօտեան ժամ 3-էն մինչև 11 տևած է: Բազմաթիւ զօրք, ճան-բէզար և աշիրաթ ջարդած՝ ետ փախած են: Յաղթութիւնը հայոցն է: Մերիներէն և ժողովրդէն 7 հոգի կուտոյ մէջ ինկած են, որոնց անուններուն տակաւին տեղեակ չենք:

Թշնամին վրէժ առնելու համար սկսեց քանդել անմեղ գիւղեր: Այսօր Խզլաղաճ, Գոմեր, Քարձոր, Փողոկով, Տազի-գոմ, Շէլլան, Քիւրդմէյտան, Ուրուղ Հայկերտ, Սուրբախ, Խաս-գիւղ, Հաւատորիկ — 12 գիւղ գաւառի մէջ զօրքերով լեցած են: Ամբողջ ութ օր կ'ընէ, կռիւ ու աւերն սկսեցր է. անց ու դարձ բոլորովին դադրած է:

Հեռաւոր հայ եղբայրներ, ո՛ր էք, միթէ չէ՞ք լսեր, միթէ չէ՞ք զգար...

Մուշ, 14 ապրիլ

Մեր անձնէր հերոսների արիւնը սկսեց հոսել: Քըրդական յարձակումին, որի մէջ թշնամին տասնապատիկ աւելի զօճ աւեց, ահա յաջողեց թիւրք զինուորական յարձակումը:

Բացի ապրիլ 11-ի քիւրդերու հետ ունեցած ընդհարումէ, ապրիլ 12-ին և 13-ին թիւրք զինուորները նոր մեծ յարձակումներ կատարեցին: Աերջին յարձակումին մասնակցեցին բերաւոր քիւրդ և թիւրք: Շէնքք, Սէմալ գիւղերը վառւեցան: Թնդանօթի հարւածներով, բացի Աէլիկէլուանէն՝ շրջակայ գիւղերը և ս վնասուեցան: Սասունի ամբողջ երկսեռ բազմութիւնը, մեծ ու փոքրը, լեցել են Աէլի: Շատերը անպատասպար, ձիւնների վրայ, զուրկ օրու պահիկէ և զգեստէ:

Ապրիլ 13-ի կռիւը տևած է ամբողջ եօթը ժամ. թէև յաղթութիւնը մերիներին մնաց, այլ թանկ նստեցաւ: Ցաւով կը յայտնենք, որ անմուսնալի ՀՐԱՅՐԸ նահատակեցաւ 15 ընկերներով: Սեպուհ և Միսակ վիրաւոր են: Թշնամու կորուստը 40-50 կը հասնի. Աահան, Անդրանիկ ողջ աւողջ են:

Ահեղ վտանգի տակ են Տարօնը և Սասունը: Գաշտի մէջ պարբերական ջարդեր սկսեր են. շուտով այնտեղ կարող է սկսիլ ընդհանուր կոտորած, եթէ ճար մը չհասնի:

Սասունը այժմ պաշարւած է հետեւեալ կերպով. — հիւսիսէն՝ Մուշի կողմէն՝ 7 վաշտ զօրքով, հարաւէն՝ Տալուրիկի կողմէն՝ 3 վաշտ զօրքով ու հազարաւոր քիւրդ աշիրէթներով: Թիւրքեր ու քիւրդեր զէնքի տակ մտած են: Սասունի պաշարման մասնակից են մի քանի յայտնի քիւրդ ցեղապետներ:

Յեղափոխականները և սասունցի հայեր աննկուն և անձնէր կը կուռին. ինչ արած, որ թշնամու բազմաքանակ բանակների դիմաց իրենց սաստկապէս կը նեղէ նաև օդի ցրտութիւնը:

Մուշ, 18 ապրիլ

Շատ նեղ պարագալի մէջ ենք: Կուսակալ Ֆերիս փաշան Մուշ ժամանելով՝ անմիջապէս բարձրացաւ լեռը: Կանոնաւոր պատերազմ տեղի ունեցաւ: Սա վարպետութեամբ ցոյց տւեց, իբր թէ կը բանակցի տղայոց հետ, իսկ միւս կողմէ զօրքը կը պաշարէր զանոնք: Ունեցանք կորուստ մը, որ անդարմանելի է, — ՀՐԱՅՐԻ նահատակութիւնը: Իր ընկերները միշտ կը պնդէին թէ՛ «եկուր դուն դարձիր, մէնք կ'մեռնինք, բայց նա անգաղար կը պատասխանէր՝ «ս յ օ ր պ ի տ ի մ ե ո ն ի մ», և նահատակեցաւ... Հրայրի մարմինը տարին Աէլիկէլուան և թաղեցին մեծ հանդէսով:

15 բանակ կար քաղաքին մէջ, որոնց 10-ը լեռ գնացր է, ի բաց առեալ քրդերը: Գեղացիք ալ այդ պատերազմին մէջ հասան օգնութեան և զօրաց աղէկ ջարդ մը տւին. վիրաւորւածները Մուշ բերին և նոր զօրք ուղարկեցին օգնութեան:

Հայերու կողմէն Անգլիայի հիւպատոսին պաշտօնական դրութիւն մը ղրկեցինք, որ հեռագրէ Պօլիս իր գեսպանին: Կարնոյ հիւպատոսին ալ սուրհանդակ ղրկեցինք:

Սէմալի կուռի համար թիւրքեր թնդանօթներ ալ տարեր են: Սէմալի եկեղեցոյ սկիհ և բուրվառ քրդերը շուկան բերեր էին, և, երևակայիցէք, ստիպւեցինք մենք գնել: Աւարին թիւ չկայ, այժ մը 40 փարայի՝ ծախւեր է, եղ մը, կով մը՝ 15 զուրուշ:

Ախլաթէն խուժք մը երկասարդներ կէկեր են և կ'սպասեն հրահանգի... Կարելի է վերջի նամակս ըլլայ...

Սասուն, 18 ապրիլ

Կուսակալը Մուշ հասնելուն պէս՝ կանչեր է մեր անաղնորդն ու հայ գլխաւորները և ասել է. «Թող անձնատուր ըլլան ապստամբները, ապա թէ ոչ զամէնն ալ կ'վերջացնեմ»:

Ժողովուրդը իրար վրայ կ'զիզէր, շարքերնիս կ'անդամներ... Լուր կայ, որ քրդեր կը մօտենան. վայրկեանէ վայրկեան արշաւանքի կ'սպասենք: Ողջ մնացողներ և հեռի ընկերներ թող շարունակեն մեր կիսաս թողածները...

Մուշ, 18 ապրիլ (Մամուլուր արքիւրից)

Կախորդ նամակս յուսամ՝ որ ստացած էք ժամանակին: Գործերու և մեր վիճակի տաքնապալից գրուածները ըստիպեց, որ այսօր ալ սոյն գրուածեամբ պարզենք ձեզ մեր արդի ճգնաժամը:

Արդէն լուր դիտէք, որ յեղափոխականաց կեդրոնը Սասունն է. Սասուն ըսելով կը հասնանք Կէլիէ-Կուզան, Շէնքը, Սէմալ, Կեղաշէն, Տափըզ, Տալարիկ, Աղբիկ, Քոփ և ինչ շատ մը գիւղեր, որոնք այժմ աստ յիշելու հարկ չկայ: Ասհան, Հրայր և Անգրանիկ տոնոց զեկավարներն են, շատ լուր և ընտիր աշխատողներ:

Ակամայից և դժբախտաբար միևնոյն տեղոյ վրայ երկու քիւրդ գիւղերու մէջ դիպածով բաղխում ունեցան և այդ ժամանակ 30-40 քիւրդեր սպաննեցան, իսկ մերիններէն մի հատ կորիճ տղայ:

Կուսակալու թիւը զայդ պատուակ բունելով՝ քսան թաւրուրի չափ զօրք տեղս լեցուց և տակաւին կը շարունակեն գալ ամէն կողմերէ: Ահագին պատրաստութեամբ և մեծ թիւով զօրք լեւ տարեցան. նմանապէս ամէն կողմերէ քիւրդեր հաւաքել սկսած են:

Կուսակալը բարձրացաւ լեռ, խաբերայութեամբ պաշարեց և սոսկալի կուրներ սկսած է: Ահաւասիկ շաբաթ մըն է, որ յեղափոխականները և սասունցիք կուր բունած են շատ շարաշար կերպով: Արդէն երեք անգամ եղաւ, որ բաղխում կ'ունենան. երեք անգամ ալ մեր ինքերը յաղթ ուղեւեղ ելան. թշնամիին վրայ ահագին սարսափ աղբեց մերիններուն դիւցազնաբար կուրելը: 100-ից աւելի զօրք սպաննած է, անոր կրկնապատիկ ալ քիւրդ վերաւորներուն թիւը տակաւին ճիշդ չգիտցուի:

Այժմ լեռը գտնւած թէ զօրք թէ քիւրդ ընդամենը 12-14 հազար հոգի են:

Մեր այժմու կացութիւնը շատ անսանելի է: Շուկայ երթալէ մասամբ դադարած ենք. վաղ առաւօտ ալ բնաւ տներէն դուրս չպիտի կրնանք ելնել, որովհետեւ այսօր մեր քաղաքէն բաւական թիւով հայ կամ տուրն եր մեկնեցան դեպի կուր վայրը, Սասուն, իրենց մասնաւոր զէնքերով և պաշարով: Կամնապէս գաշաի մէջ եղածները ամբողջն ալ զէնք ի ձեռին պատրաստ են նահատակելու և իրենց արիւնը թափելու ազատութեան համար:

Նշաններէն այնպէս կ'երևի, որ այսօր գիշեր գաշաի և շրջակայից մէջ ալ հրոստիմբեր պիտի հնչեցնեն բողբոջի ձայնը: Տարօնոյ հայ ժողովուրդը սիրայօժար կը մասնակցի յեղափոխական գործին:

Ար սիրերք հաւատարմ որ հեռաւոր երկիրներու մէջ

բնակող մեր ազգակից եղբայրները ընդ փոյթ պիտի գան և օգնութեան հասնին մեզ:

Առաջնորդներ և քաղաքային ժողովոյ անդամներ տակաւին լեռն են կուսակալին հետ և խեղճերը շարաշար կը ներդէն, որովհետեւ կուսակալը կ'ուղէ հանրագրութիւն մը պատրաստել ստորագրել տալ ու զըկել կուսակալութեան և դեպքաններուն, ասելով, թէ այդքան արեան թափելուն պատճառը յեղափոխականներ եղան: Սակայն անկարելի կը թուի այդ գուցէ շատ բացառիկ հանգամանքներ միայն կրնան անոնց ստիպել այդպիսի բան մը ընել:

ՍԱՍՈՒՆԻ ԵՐԵՔ ԿՈՒՒԸ

(Մամուլամաներ)

ԿԵԼԻԷ-ԿՐԵՄԱՆԻ ԸՆԴՅԱՐՈՒՄԸ

(Մարտ 30)

Սասուն, 31 մարտ

Կուր սկսաւ: Թէև շատ կը փափագէինք, որ երբէք քրդերու հետ գործ չունենանք և անոնց բարեկամութիւնը շահելու համար ջանք չէինք խնայեր, բայց ինչ օգուտ, որ կուսակալութիւնն ալ միւս կողմէն ամէն ճիգ կը թափէր այդ կողմը ամբողջ մեզ դէմ լարելու և գրգռելու: Ու վերջապէս յաջողեցաւ:


Առաջին ընդհարումը եղաւ երէկ: Պատմենք.

Գրած էինք Տաբրկայ գէպի մասին, ուր քրդեր սպաննել խորհած էին Անգրանիկը: Այս պատճառով գրուեցինք Տաբրկը և քեցցինք քրդերը: Այս դէպքը բաւականին յուզեց քրդերը, բայց մենք ջանացինք հանդարտեցնել զիրենք: Կուսակալութիւնն ալ ի նպաստ իրեն գործածեց այս փաստը:

Անտորը գիտէք, ինչպէս նաև Կէլիէկընման, Կէլիէմուր, և Շէն: Շէնի մօտերը կայ «Տալաւէ գոմ» ըսած տեղը, ուր 7 տունի չափ հայ կը գտնուին: Այդ կողմերի քրդերը, պատրաստեցին խորհուրդ կ'ընեն որ այդ 7 տուն գերը, պատրաստեցին խորհուրդ կ'ընեն որ այդ 7 տուն հայերուն ունեցածները թալեն և զիրենք ալ գերի պահելու: Հայասէր քիւրդ մը այդ խորհուրդը կը յայտնէ հայերուն. ասոնք ալ անմիջապէս լուր կը զրկեն Շէնը և Սէմալ, որպէս զի գան զիրենք փրկեն այս փորձանքէն:

Այս միջոցին տասնապետ Մուրատը գոմերցի Իսօն և ժոկուրցի Իսօն դաշտէն դարձած — ուր գացած էին գործով — կը գտնուէին յէմալ խորհուրդ կ'ընեն և երկու փուղէն բաւական զինւած ու շալակաւոր մարդ առած՝ կերթան փոխապրել գիշերով այդ խեղճ հայերը: Եւ մեզ ալ լուր տուին վերջ ճամբայ կ'ելեն: Ասի կ'ըլլայ Չատիկ անաղնի օրը, մարտ 27-ին:

Բայց դեռ ասոնք ճամբայ չելած, լուր կուգայ, որ քրդերը յարձակում գործած են Տալաւէի վրայ, թալներ են Միրբօյի տուն և տղան ալ տարել են. իսկ մնացած հայերը բանտարկեր են իրենց տուները: Մուրատ և ընկերներ, ինչպէս նաև շէնըցի զինուոր Ղազար և մեծ բազմութիւն Շէնըքէն և Սէմալէն, կերթան Կէլիէկընման: Մերինները հոն մնալով, մնացածները կ'ընեն Կէլիէմուր: Ապա մերինները կուղղին Տալաւէի վրայ. բոլոր քրդերու տունները հսկողութեան տակ կ'առնեն և այն կողմերը



ԲՈՒՍԱՆԵՔ

գանձած հայերը հետները վերցնելով՝ տուները կը վառեն: Այս դէպքը կը պատահի Զատիկ օրուայ առաջին դիշերը: Քրդեր Տալաւէն թայնած են շաբաթ օրը: Մերիներ Տալաւէն հետերնին կը բերեն նաև քրդացած հայ մը, անունը Սալին, կինն ալ քրդու: Քրդեր երբ կ'իմանան որ հայեր վառած են իրենց տունները և քաշած դէպի Ալեքիէկընման, չորս կողմէն կը հաւաքին մերձաւոր տեղ մը: Երէկ առաւօտ այդ քրդացած հայ Սալին կը փախչի դէպի քրդերու կողմը. քանի մը տղայ կը տեսնեն, ետեէն կը վազեն բռնելու և մինչև քրդերու տուներու կողմը երթալով, կը տեսնեն որ քրդեր հաւաքած են 200-էն աւելի պատերազմիկներ և կը պատրաստին արշաւանք գործել Ալեքիէկընմանի վրայ: Մերիները դիրքեր բռնելով՝ կուէի կը պատրաստին: Հոգ կ'ըլլան Մուրատ, Կորիւն և Խարո: Ներկայ եղող շէնքըցիներ և սեմայցիներ ալ օգնութեան կը վազեն իրենց դիւաւորներով: Ըստով հաւար կը ձգեն նաև գիւղերը: Գեւա աղթարան չբացած՝ կուէր կըստին: Մերիները առիւծի պէս առաջ կը նետուին: Մոկուէքի Խարոն, հակառակ իրեն եղած աղգարարութեանց, արհամարելով ամէն վտանգ, կը նետուի քրդերու վրայ՝ «միթէ՞ քրդի գնդակն ալ Ֆէդայի կրնայ զարնել» ըսելով: Քարի մը ետև պահած քրդեր կը վարեն քամակէն և մեր ԽՍԹՕՆ կըսպանին: Բնկերոջ այս կորուստի առջև մերիները կը կատարին և նոր օգնութիւն ալ հասնելով Շէնքըքն, Ալեմալէն, Ալիանքէն՝ ամէն կողմէ կը պաշարեն քրդերը: Մաս մը կը փախչեն, մաս մըն ալ կը փակուի տուներու մէջ:

Հոս աննկարագրելի քաջութիւն, յանդգնութիւն և կորով կը ցուցնեն թէ Մուրատն ու զինուորներ և թէ հայ ժողովուրդը: Տուներ փակած քրդերէն մաս մը կը յաջողին փախչել և մաս մըն ալ կը ջարդուին, կըսպանուին: Կուէր կը տեսնէ մինչև կէսօր և կը վերջանայ քրդերու փախուստով: Մասունցիք կ'ուզեն հետապնդել և իրենց 10 տարի առաջ տաած զոհերու վրէժը լուծել, բայց Մուրատը կարգիէ, այդ օրուայ համար բաւական սեպելով այդքանը:

Յհա այս է երէկայ մեր անդրանիկ կուէրը: Մեղմէ սպաննած է մոկուէքի ԽՍԹՕՆ և 2 շէնքըցի ալ վերաւորած են. իսկ քրդերէն սպաննած են աւելի քան 25 մարդ և շատերու զէնքերն ալ գրաված են:

ԱԱՀԱՆ

ՇԵՆՔՐԳ-ՍԵՄԱԼԻ ԿՈՒԻՆԵՐԸ
(Ապրիլ 11-13)

Սասուն, 14 ապրիլ

Սասուն բռնկած է: Կուէր կը շարունակուի մեր և կառավարութեան ու քրդերու միջև: Նախօրը նամակներով կրցածիս չափ երկար գրած եմ մարտի 30 ի կուէի մասին: Այդ դէպքէն շաբաթ մը յետոյ՝ լսելով որ չորս կողմէն զօրք և աշիրթ պիտի գայ, հայերը Շէնքըքը վառեցին, թշնամու ձեռքը չըտարու համար:

Կուսակալը իր հետ ունենալով քանի մը հազար զինուոր և Բաղէշի, Մուշի առաջնորդներն ու Մուշի գլխաւորները, հոս եկեր է:

Ապրիլ 11-ին անհամար քրդեր և թիւրք ձիւար ստիկաններ ու զինուորներ կը պատրաստուէին յարձակուիլ Սէմալի վրայ: Կուէրն մինչև Շէնիկի աւերակները:

Ասոնց պատրաստութիւնը տեսնելով՝ մեր տղայք և ժողովուրդը, շրայրի առաջնորդութեան տակ, կը յար-

ձակին քրդերու և զօրքին վրայ, լանսնք կը բռնեն, կը տանին մինչև մարտ 30-ի կուէի տեղը: Զօրքերը դէպի դաշտ կը փախչեն, իսկ քրդերը՝ Շէն: Այս երկրորդ կուէի մէջ մեզնէ սպաննեցաւ ալիանցի ՏՕՆՕԻ ՀԵՐՕ անունով ազնիւ երիտասարդը, իսկ թշնամին աւելց 10-ից աւելի սպաննած և շատ մը վիրաւորներ:

Ապրիլ 12-ի երեկոյեան, կուսակալը Ալեմալ զրկեց, իբր պատգամաւոր, ս. Յովհաննու վանքի Ասաքել վարդապետը, որը իր հետ կը բերէր պատրիարքի նամակը, Մշոյ և Բաղէշի առաջնորդներու և Մշոյ երեւելիներու դիրքը: Պատասխանելու համար յաջորդ առաւօտը ինքս գնացի Կեղաշէն, ուր պիտի տեղի ունենար համախումբումը: Այնտեղ հասայ ապրիլ 13-ի ժամը 1-ին եւ երբ կըսպասէի շրայրի գալուն, յանկարծ կուէի հաւարի ձայներ հասան: Երեցաւ, որ կուսակալի բանակցութեան խնդիրը կեղծ է եղեր, զմեզ իրարու վրայ հաւաքելով և ապահով համարելով՝ կ'ուզէ եղեր մէկ հարւածով ամեն ինչ վերջացնել:

Առաւօտեան ժամը 1-ին, զօրքերը և աշիրէթը կը յառաջանան դէպի Շէնքըք և անկէ ալ Ալեմալ: շրայրը իր խմբով կը գանձուի Ալեմալ նա կը նշմարէ անոնց յարձակողական դիրքը և անմիջապէս կ'ուսի կուսայ Կաշտակն ու Ալեմալը, թշնամու ձեռքից աղատելու համար, և ժողովուրդը կ'ըլլէ դէպի սար: Մերիները սպանելով որ ժողովուրդը գայ, կ'ուշանան վերի դիրքերը բռնելու: Ալեմալի Տրդեհն ալ կ'արագելէ զերինը թշնամու շարժումները տեսնելու: Թշնամին թնդանօթի 15 հարւած կը պարպէ Ալեմալի վրայ և չորս կողմէն կը խուժէ:

Մերիները տեղի կ'ուտան և կը նահանջեն մինչև Չայ կ'սպանուի մեր թանկագին ընկեր ՎԻԱՅԻ և զինուոր ՄԱՏՕՆ (ախցիտացի), սեմալցի ԿՐՊՕՆ և ուրիշ քանի մը տեղացիներ:

Թշնամին կը յառաջանայ Ալեքիէկուզանի վրայ հոս օգնութեան կը հասնին հայ կուսակալները և վերէն կը յարձակին զօրքի վրայ. ասոնք կը թողնեն և փախուստ կուտան կուէրով: Մերիները բաւական տեղ կը մղեն լանսնք: Մեպուհ և ուրիշ քանի մը ընկերներ վերաւորած են, իսկ թշնամու կողմէն 100-ից աւելի զոհ կայ և բազմաթիւ վիրաւորներ: Մերոնք վերցրին թշնամուց 17 հոտ մաւզէր:

Այսօր նոր զօրքեր եկան Մուշէն. վաղը թերևս նոր կուէր ունենանք: Եթէ յաղթուինք և Սասուն ոչնչանայ, թող ուրիշներ լուծեն մեր վրէժը...

Սասուն, 14 ապրիլ

(ուրիշ ծանուցումով)

Ապրիլ 11-ին ունեցանք երկրորդ կուէր մը, որի մէջ դարձեալ յաղթութիւնը մեզ մնաց:

Երէկ, ապրիլ 13-ին, ունեցանք երկրորդ ահաւոր կուէր Ալեմալում, որի մէջ կրկին մեր տարանք յաղթութիւնը, բայց անպարմանելի կորուստներ սուսինք, — ՎԻԱՅԻ (Կոթիք-Արմենակ), զինուոր ՄԱՏՕՆ (ախցիտացի) սպաննած են, նոյնպէս սեմալցի ԿՐՊՕՆ և այլ 4-5 հոգի ժողովուրդից թշնամին տուժեց աւելի 100-ից աւելի զոհ առաւ և բազմաթիւ վիրաւորներ: Այսօր նոր զօրք եկան Մուշէն. վաղը թերևս աւելի մեծ ճակատամարտ ունենանք. եթէ ոչնչանանք, անշուշտ կը շարունակէք մեր գործը...

ԱԱՀԱՆ

Կ Ե Լ Ի Ի Կ Ռ Ի Ի Ը

(Ապրիլ 20-22)

Մուշ, 25 ապրիլ

Սասնոյ յեղափոխութիւնը մինչև ապրիլի 20 ահեղ ճակատամարտներու մէջ յաջողութեան դրօշներ կը ծածանեցնէր: Թշնամին՝ որ մեծաքանակ կանուխաւոր զօրքերէ վաս՝ չորս կողմերէն քիւրդ աշիրէթներ հաւաքած ունէր ի Սասուն, տղօց յաջողութիւններէն վհատելով, հետզհետէ Մուշ հասած զօրաց վաշտերն, տեղացի իսլամութեան ընդհանրութիւնը և վերստին ճիարպէթիւրէն սկսեալ մինչև խարբերդի, Վանի և Բաղջի սահմաններ գտնուող քիւրդ աշիրէթներն ալ զորոնք հրաւիրած էր կանխաւ, յաջորդաբար լեռ բարձրացուց:

Ասոնց գումարումէն վերջ, ներկայիս 20-ին, երեքշաբթի օր, առաւօտեան ժամը 8-ին, թշնամին նախապէս 2-300 անգամ թնդանօթներ կ'արձակէ յեղափոխականաց կէլիէկուզան դիւղի գլուխը գտնուող դիրքերուն վրայ և ապա թնդանօթի ահեղ որոտումներու տակէն՝ կ'սկսին հրացանածոթիւն զօրքը, քիւրդը, աշիրէթը, որոնց ամենուն ձեռքն ալ կառավարութեան կողմէ կանոնաւոր զէնքեր դրած կ'ըլլայ Բաղջի վայրին:

Մեր կարիճները թշնամուն այս անօրինակ և բազմաթիւ արշաւանքին և միւս կողմէ թնդանօթներու դուռ գոչումին հանդէպ, առանց վհատութեան, պաղարիւնութեամբ, կը շարունակին կռիւր, պատասխանելով դժոխային բանակի թնդանօթներուն ու հրացաններուն իրենց գնդակներով միայն՝ և կը յաջողին մեծ կորուստ պատճառել այդ գաղան ամբոխին ու հերոսաբար պաշտպանել կէլիէկուզանը:

Ապրիլի 20-ի օրը մերինները նորէն յաղթութեամբ կ'ելլեն կուէն: Պատերազմը սակայն չդադրիր և կը շարունակուի գրեթէ գիշեր ու ցորեկ երկու օր ամբողջ: Բայց որովհետև թշնամին բանակը սև գետնի վրայ և մերինները ձեան վրայ կը լինի, ցուրտն ու յոգնութիւնը վերջապէս կը յաղթեն մեր հերոսներուն, որոնք պարտաւորուած կը թողուն իրենց դիրքերն ու կը քաշին կէլիէկուզանէն, ուր արդէն կանխաւ հաւաքուած էին 30-է աւելի գիւղերու բնակչութիւնը:

Թշնամին՝ յեղափոխականաց այս նահանջումէն քաջալերուած՝ ալ կանգ չառնէր, թնդանօթներ կ'սկսի որոտալ կէլիէի մէջ ապաստանած հազարներով կին և երեխաներու վրայ ու միտժամանակ բանակը քայլեցնել կուտայ ի կէլի: Թէև հոգ ալ շատ կորուստ կ'ունենայ, բայց վերջապէս կէլի կը գրավուի և ժողովուրդի այն մասը, որ չէր կրցեր միանալ մերիններուն, թշնամուն ձեռքը կ'իյնայ:

Մանրամասները կը պակսին: Մեր կարիճները նահանջելով ապաստանեցին լերանց գագաթները, որոնցմէ մինչև պահուս լուր չառինք, որովհետև հազարակցութիւններէ կտրուած ենք: Սասնոյ և Գաշաին ամբողջ լեռներ ու ձորեր զօրքերով ու քիւրդերով լեցուն են:

Այս բոլոր սոսկալի ընդհարումները եղան, լմնցան 20-23 ապրիլի: 23-ին և 24-ին 2-300 կանայք մերի, բոլոտն և կիսամահ բերեցան այստեղ կառավարութեան դուռ, զորոնք տան մը մէջ իրարու վրայ լեցուցած են անօթի, խիստ հսկողութեան ներքև և յարաբերութիւններէ զուրկ:

Ապրիլ 22-ին, երբ կէլիի գրաւումը տեղի պիտի ունենար և գաղանութիւնները պիտի վերսկսէին, վաղին իր մօտ հսկողութեան ներքև դրած առաջնորդներ, վարդապետներն ու երեւելիները (ժողովականք) բանտարկելով՝ հանրագրութիւն կը պահանջէ քէֆը ուղածին պէս պատրաստելով զայն: Թէև առաջի առթիւ կը մերժեն, վերջապէս սպառնալքի տակ բռնի ստորագրութիւն կ'առնէ և ապա Մուշ կ'իջնեցնէ զանոնք:

Ամսոյս 27-ին գաշաի Բերդակ գիւղին մէջն ալ ընդհարում տեղի ունեցաւ զօրաց և յեղափոխական խմբի մը մէջ: Մերինները յաջող դուրս կուգան սպաննելով քանի մը զինուոր և դրաւելով քանի մը հրացան: Զօրքը կը լուծէ իր վոէժը բերդակցիներէ՝ սպաննելով անոնցմէ 12 կին և մարդ: Միւս գիւղացիք կը փախչին ասանդ: Գիւղը կողոպտուելէ վերջ կրակի կը տրուի զօրաց կողմէ:

Վաստեր, որ քաջ են սոսկ անպէն ժողովուրդի դիմաց: **ՄՈՒՇԻ ԿՕՄԻՏԵ**

Գ Ի Մ Ո Ւ Մ Ն Ե Ր

Արձագանք տալով Սասունից եկած ծանր լուրերին, «Գրօշակի» խմբագրութիւնը ուղղեց ֆրանսիական, անգլիական, իտալական և աւստրիական արտաքին գործերի մինիստրութիւններին մի մանրամասն տեղեկագիր-հեռագիր, խնդրելով անմիջական միջամտութիւն՝ սանձահարութեան օսմանեան կառավարութեան վայրագ գործողութիւնները, որոնք կասկած չկայ, թելադրուած են Վ. Պօլսից, սուլթանի պալատից: Մենք չենք խնդրում խնայել յեղափոխականներին, այլ պահանջում ենք անմասն ժողովրդից չառնել յեղափոխական տարրի վրէժը:

Միաժամանակ «Գաշակցութեան» անունից՝ Արևմտեան Բիւրօն գիւմումներ արեց Անդրկայի, Գրանսիայի և Իտալիայի ականաւոր քաղաքական գործիչներին, ինչպէս և սպիտակ լրագիրներ խմբագրութիւններին՝ խնդրելով յուղել հայկական հարցը մամուլի և պարլամենտների մէջ:

Պարիզից, ֆրանսիացի մեր բարեկամները, որոնք լուծանօթ են կառավարչական արամագրութիւններին, մեղ տեղեկացնում են, որ ֆրանսիական արտաքին գործերի մինիստրը գործնական քայլեր է անում Սասունի և Տարսուզի հայերին հովանաւորելու համար: Այդ նպատակով պ. Գիւլիսէ բանակցութեան մէջ է արդէն անգլիական և ռուսաց արտաքին գործերի մինիստրների հետ, և իբր արդիւնք այդ բանակցութեան՝ կարգադրուած է, որ երեք պետութիւնների հիւպատոսները շտապեն դէպի Մուշ՝ հարկաւոր միջոցները ձեռք առնելու համար: Տարսուզից մեր ընկերները հաղորդում են, որ «երբ լուր տարածուեց, թէ եւրոպական հիւպատոսները գալիս են, ժողովուրդը սրտապնդեց, խի թիւրք պաշտօնեաները սկսեցին աւելի զգոյշ և չափաւոր լինել»:

Յայտնի հայաստէրներ Ատեֆէնսն և Ջէմա Բրայս մայիսի 20-ին անգլիական պարլամենտի մէջ հարցապնդում արին Հայաստանում կատարուող արիւնոտ անցքերի մա-

սին: Արտաքին գործերի մինիստրութեան կողմից՝ կոմս Պերսի յայտարարեց՝ որ անգլիական կառավարութիւնը խորհրդակցութեան մէջ է ֆրանսիայի ու Ռուսաստանի հետ և յոյս ունի այնպէս կարգադրել որ Բիթլիզի ֆրանսիական և ռուսական հիւպատոսները բերանակա- կան հիւպատոսի հետ համերաշխ քայլեր անեն՝ մի եզ- րակացութեան յանգելու համար:

Մայիս 28-ին իտալական պարլամենտում պ. Ֆու- չիանտո, արտաքին գործերի մինիստրութեան կողմից պատասխանելով պ. Ֆրանկաստիի մի հարցումին, յայ- տարարեց, որ Վ. Պոլսի իտալական դեսպանին մի քանի անգամ պատուիրած է ուղղել Բ. Գրան հարկաւոր յորդորներ, որպէսզի չնորոգւին Հայաստանի ցաւալի անցքերը:

Ֆրանսիական պարլամենտի անգամ ֆրանսիս դը Պրէ- սանտէ ուղղեց արտաքին գործերի մինիստր պ. Գելլիասէին հետեւեալ նամակը, մայիս 26-ից.

Պարոն մինիստր եւ սիրելի պաշտօնակից,

Թոյլ աւելք ինձ տեղեկացնել ձեզ այն ծանրակշիւ կարևորութիւն ունեցող հեռագրերի մասին, որ ես նոր օտապայ Թիֆլիզի և Բագուից և որոնք ինձ հաղորդում են, շրման թաղամասներով, վերսկսումը Սասունի կատարած- ների, ներկայ ամսի սկզբին, մի մեծ տարածութեան վրայ: Շտապում եմ յայտնել ի գիտութիւն ձեր, որ ես պատիւ կ'ունենամ առաջարկելու ձեզ, հնարաւոր եղածին չափ շու- տով, մի հարցապնդում, վերաբերմամբ այն միջոցների, որոնց ֆրանսիական դիւանագիտութիւնը պիտի դիմէ՝ վերջ դնելու այս շարագործութիւններին, ձեռք բերելու սանձահարումն և թոյլ չտալու որ կրկին ստան տարի առաջ տեղի ունեցած ստիպելու դեպքերը: Ես երախտապարտ կը լինեմ, եթէ բարեհաճէք նշանակելու այն օրը, երբ կարող կը լի- նէք ընդունելու իմ հարցապնդումը:

ՔՐԻՍՏՄԻՍ ԴԼ ՊՐԵՍԱՆՍԻ
Պատգամաւոր Բօնի

Յունիսի 29 (ն. տ.) նախագահութեամբ ջէմս Բըր- այսի, որին վիճակաւ է ներկայումս ուղղութիւն տալ Հայասիրական շարժմանը Անգլիայում, տեղի կունենայ Լօնդօնում մի մեծ միտինգ՝ բաղմամբիւ անգլիական և ֆրանսիական քաղաքական գործիչների մասնակցութեամբ: Անգլիացիներին կը մասնակցեն լորդերի պալատի և պարլամենտի շատ անդամներ, նոյնպէս Ռօչեստեր ու Հերֆօրդ յայտնի եպիսկոպոսները: Ֆրանսիացիներին կը լինեն՝ Պրէսանտէ, Դէնի Կօչէն, Ժօրէս, Վիկտօր Բերար, արքա Լեմիր և ուրիշները:

Ս Ա Ս ՈՒ Ն

Վ. Ի Ճ Ա. Կ Ա. Գ Ր Ա. Կ Ա. Ն

Միանգամայն մանանկակից ենք համարում վիճակագրական մանրամասն տեղեկութիւններ տալ այն լեռնավայրի մասին, որի վրայ ուղղած է ընդհանուրի ուշադրութիւնը, որտեղ այժմ հայ ռազմիկները մղում են ազատութեան կռիւր:

Սասունը, որ Հայաստանի մէջ, մինչև վերջերս, ամենէն քիչ ուսումնասիրած վայրն է, կը ներկայացնէ լեռներու կոյտ մը, սակայն ոչ զուրկ բնակչութենէ: Եթէ վերջները

զուտ լեռնային նահանգը, որ կը տարածուի արևել- քէն արևմուտք՝ Բաղէշ քաղաքէն մինչև Կէնձ, մօտ 50 ժամաւ ճանապարհ, և Մուշ քաքաքէն դէպի հարաւ, մինչև Տիգրանակերտի դաշտը՝ մօտ 24-30 ժամ, — շատ դժուար պիտի ըլլայ մանրամասնորէն պատկերացնել: Ուստի կը վերջները այս լեռնաշղթան կերտօնական մասը:

Մշոյ դաշտի հարաւային կողմը, ճիշդ Մուշ քաղաքի կռնակը կ'իյնայ այս մասը և Մուշէն կը բաժնուի Կուռդիք լեռնաշղթայով: Այս լեռնաշղթան անմարդաբնակ է, ի բաց առեալ հիւսիսային երեսը, ուր շինած են Մշոյ դաշտի գիւղերէն մի քանիսը: Ամառայ եղանակին Տիգ- րանակերտի կողմերէն՝ բագրանցի, զիլանցի, պատրգանցի և սասունցի կոչուած քիւրդ ցեղերը կուգան վրանին կը հաստատեն այս լեռնաշղթային վրայ:

Ծովասարի շղթան, որ իր թևերով կը կցուի Կուռդիքին, կը սահմանէ այս միջին մասը — Ֆէդայիներու Սասունը — արևելքէն, հարաւէն՝ Տիգրանակերտի դաշտը, արևմուտ- քէն Կէնձ գաւառը կը կատարեն նոյնը:

Այս տարածութիւնը տեղացիները կը բաժնեն եօթը գաւառակներու, որոնք են՝ 1) Շատախ, 2) Գաւառ կամ Միջին մաս, 3) Ծովասարի փէշերը, 4) Տալուրիկ, 5) Բուսանաց գաւառ, 6) Խիանք, 7) Խուլք:

Շ ա տ ա խ ը ունի 10 գիւղեր, որ կը տարածուի, Կուռդիք լեռնաշղթայի հարաւային փէշերուն վրայ, արևելքէն արևմուտք: Միջին մասէն կը բաժնուի փոքրիկ լեռներով, Մուշէն 4-5 ժամ դէպի հարաւ:

Գ ա լ ա ո կամ Միջին մասը Անտոք լեռան հիւսիս և արևելք երկարող հովիտներու մէջ գետեղած է: Չորս գլխաւոր գիւղեր ունի, բազմաթիւ թաղերով: Գիւ- ղերէն Իշննձոր՝ կ'իյնայ դէպի հարաւ, Կեփին լեռան ստորոտը:

Անտոք և Կեփին լեռներու դիմացը, դէպի արևելք, Ծովասարի ձորակներուն մէջ գետեղած են 10 փոքրիկ գիւղեր, որոնք առանձին մի շրջան կը կազմեն, թէև ոչ որոշ անունով, որ Ծ ո վ ա ս ս ր ի փ է շ է ր ը անա- նեցինք վերը:

Տ ա լ ո Ր ի կ Շատախէն 7 ժամ հեռի կ'իյնայ և 11 փոքրիկ գիւղերու կամ թաղերու կը բաժնուի, ինքնին ներկայացնելով մի շրջան: Այս շրջանին մէջ, Փորխ թաղի վերելը, կ'իյնայ պատմական Ֆրոֆրո-քարը, որ սև ու լերկ քարերով անառիկ դիրք մըն է: Սխտոյքար, Կապլօր և Կուրջիկ լեռները կ'իյնան Տալուրիկի հիւսիսային կողմը և կուի լաւ դիրքեր ունին:

Բ ո լ ս ա ն ա գ գաւառը կը տարածուի Տալուրիկի հարաւային-արևելքը իր 16 հայ գիւղերովը:

Խ ի ա ն ք ը ունի 10 գիւղեր և կ'իյնայ Տալուրիկէն դէպի հարաւ:

Խ ու լ ը Անտոք և Կեփին սարերու արևմտեան փէշերէն կըսկսի ու կը տարածուի մինչև Կիւնի լեռները: 9 գիւղեր կան այս գաւառակին մէջ:

Անտոք լեռը, ինչպէս նաև Կեփին, կը գտնուի միջին մասի մէջ: Անտոքը կը բարձրանայ Կէլեկուզան գիւղի կռնակին, իսկ Կեփինը՝ անկէ 2 ժամ դէպի հարաւ:

Նախ քան գիւղերու ցուցակը տալ պէտք է ըսել թէ իւրաքանչիւր գիւղն ինքն իր մէջ բաժանուած է գիւ- ղակներու — այսինքն մայր գիւղէն տարիներու ընթացքին մէջ բաժանուել են տուններ և մէկէն մինչև երկու ժամ հեռաւորութեան վրայ հիմներ են մի նոր գիւղ. սակայն

ինքնին մնացեր են մայր գիւղին հետ կապած և միշտ նկատուելի են անոր մի մասը այնքան ատեն՝ որքան իրենք իրենցմէ ալ բաժանուողներ չեն տուեր: Երբ այս բաժանուողները այնքան մեծցեր են, որ իրենցմէ բաժանուողներ եղեր են, հետեւաբար իրենք իրենց մէջ կազմեր են մի ամբողջութիւն, շուրջներին ունենալով նոր թաղեր, այն ժամանակ նկատուելի են ինքնուրոյն մի գիւղ և բաժանուելի են մայր գիւղէն:

Ահա ցուցադր Սասնոյ գիւղերուն՝ իրենց բնակիչներով:

Ա. Շ Ա Տ Ա Խ

	Հայ	Սոսն	Քիւրդ
Կերմա	30	սոսն	—
Քօփ	45	"	—
Իրիցանք	10	"	—
Տափըզ	17	"	9
Գեղաշէն	15	"	—
Շուշնամերկ	25	"	—
Սէմալ ¹⁾	65	"	—
Շէնըբ	55	"	—
Կելիէկանըման	15	"	—
Կելիէմսուր	20	"	3
Գումար	297	"	12

Բ. ԳՈՒԱՌԻ ԿԱՄ ՄԻՋԻՆ ՄԱՍ

	Հայ	Սոսն	Քիւրդ
Կելիէկուզան	120	սոսն	—
Ալիանք ²⁾	60	"	—
Աղբի	80	"	—
Իշինձոր	50	"	—
Գումար	310	"	—

Կելիէկուզան կը բաժնուի հետեւեալ թաղերու.— Խարձնգոմ, Տաղվրնի, Դարիպճան, Մխիթար, Մղլէսան, Հօսիլներ, Հիւսէյնցիք, Խասօի Մղբէն, Կալբրդիկ՝ Տա- հօյներ, Ռաշըքներ, Ամբարներ, Խօյըքներ, Մէրկէր, Հարսօի գոմեր, Փալի գոմեր, Ալօճակ եւ Եկեղեցոյ թաղ կամ Բուն գիւղ: Թաղերէն ուսանք սուն զիւղէն մէկ ժամ հեռու կը գտնուին Աղբիի բաժանումներն են—Աղբի, Խասն, Թխիկ եւ Կալառաշ: Իշինձոր ունի 4 թաղեր— Կալիք, Նորհան, Խուզրկու արտեր եւ Բուն զիւղը:

Գ. Ծ Ո Ղ Ա Ս Ա Ր Ի ³⁾ Փ Է Շ Ե Ր

	Հայ	Սոսն	Քիւրդ
Հեթինք	35	սոսն	—
Խոճոճվանք	8	"	10
Արգիկ	10	"	—
Հարկորք	15	"	8
Քրդամանք	15	"	—
Հաւկոնք	6	"	—
Հոսներ	1	"	—
Քարավանք	3	"	—
Խլհոյկտ	8	"	—
Քորախու և Արգիսու	12	"	—
Գումար	113	"	18

1) Սէմալ կը բաժնուի քանի մը թաղերու՝ իրարմէ քստորդ կամ կէս ժամ հեռաւորութեամբ:
 2) Ալիանք կամ Ալիանցիք մինչեւ 1903 թւականի սկիզբները կը համարուէր Կելիէկուզանի մի թաղը, սակայն վերջերս բաժանուելով, կազմեց ատանձին գիւղ, որ ունի 8 թաղ:
 3) Ծովասարի փէշերու զիւղեր քրդերու ընդհարումներուն տակաւ չկանալով, ցիրուցան նկատ են, թողնելով այն ինչ որ կը յիշուի հոս:

Դ. Ց Ա Լ Ի Ո Ր Ի Կ

	Հայ	Սոսն	Քիւրդ
Հլողներ	25	սոսն	—
Տարուրիկ	25	"	—
Հագմանք	10	"	—
Դւալներ	15	"	—
Արգվիներ	15	"	—
Փորխ	15	"	—
Հոսնուա	4	"	—
Հարթք	10	"	—
Սպաղանք	25	"	—
Չորեր	3	"	—
Եղկարտ	12	"	—
Գումար	174	"	—

Ե. Բ Ո Ւ Ս Ա Ն Ա Ց Գ Ա Ի Ա Ռ

	Հայ	Սոսն	Քիւրդ
Դաժպետրիկ	4	սոսն	—
Մարսթօ	10	"	—
Մքթներ	22	"	—
Քաջառիներ	15	"	—
Կոռընկէս	7	"	—
Բսանք	9	"	—
Թարուկ	14	"	—
Տալհօր	3	"	—
Փշուա	5	"	—
Միջգեղ	28	"	—
Խնձորիկ	23	"	—
Ջրթներ	18	"	—
Գէլօէնք	6	"	—
Մղբէ և Կրէձոր	12	"	—
Գոմք	18	"	—
Թաթունք	6	"	—
Գումար	200	"	—

Զ. Խ Ի Ա Ն Ք

	Հայ	Սոսն	Քիւրդ
Պերմ	80	սոսն	—
Արխոնդ	20	"	—
Պահամտա	20	"	15
Արսըբ	15	"	10
Փառկա	40	"	—
Սազտուն	30	"	—
Հեղին	15	"	—
Արտկուկք	30	"	—
Ընկուզնակ	40	"	—
Սէվիթ	30	"	—
Գումար	320	"	—

Է. Խ Ո Ւ Լ Բ

	Հայ	Սոսն	Քիւրդ
Գեղերվանք	80	սոսն	—
Ահարոնք	60	"	—
Շուղէգ	15	"	10
Կասգէ	50	"	50
Փասուր	40	"	40
Էհուր	30	"	—
Ընձբար	80	"	—
Գումար	355	"	100

Ինչպէս կը տեսնուի վերի ցուցակէն, Սասնոյ Հայա-
բնակ մասը կը բաղկանայ 1769 Հայ և 155 քիւրդ
ընտանիքներէ: Թէև Հայ շրջանները քիչ բացառու-
թեամբ անխառն են քիւրդերէ, սակայն զերծ չեն անոնց
դրացութենէն: Քրդերը կը բնակին Խուլթի, Խիանքի և
Բուսանաց գաւառի շրջակայքը:

Հ Ա Յ Ղ Ա Ր Ի Պ Ի Ն

Ճերիք չէ՞ ակպէր, տուն տեղ թողած՝
Ճիժ ու պիժդ հասրաթով մնայ,
Քու հէր ու մէրը, հալուր ընկած՝
Ախ-վահս քաշեն — երբ թօրոն իգայ:

Հար ե՞րբ մնաս, երկիր խաղաղի,
Տաճիկ անօրէն չ'անի թալան,
Քիւրդ համիդիէն որ հանդարտի,
Մըր տուն ու տեղ էլ չ'անի վերան:

Արի, իմ ակպէր, ֆայդահ չկայ,
Մըր սար ու քարն արիւն կտրեր.
Արի, ակպէր, քո թըվընքն առ,
Դու քու ձեռքով ազատութիւն բեր:

Դէհ, արի, ակպէր, արի սիրտ առ
Մըր պահպան կտրիճ ֆեդահուց,
Արի, ակպէր, սուր թուրը վեր առ,
Քե օգնութիւն թող գայ զինուց:

Մըր ջան ֆեդան, տեսնե՞ս ինչպէս,
Գոտիկը կապած պատուռն, խէնչալ,
Ձեռքը թըվընք, բոց կրակին պէս
Տաճիկն, քրդին որ կիտայ զարար:

Մըր սար ու քարն, դաշտ ու դուրան
Էնդուր ոտներուն զուրբան կիգայ,
Ձիւն ու բուքն, անձրեւն ու բորան
Ասլան ֆեդայուն եղսիր կիգայ:

Էլ արի, ակպէր, մեռնենք մըկտեղ
Մըր տուն ու տեղը, անուշ վաթան,
Դէ՛հ, արի, ակպէր, կուենք մըկտեղ,
Մընք կ'ազատենք մըր Հայաստան:

ՄՇԵՑԻ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Վ Ի Ճ Ա Կ Ը

Հ Ա Ս Ա Ն-Գ Ա Լ Է, 13 ապրիլ

Գարունը բացւեց, ձիւները հալեցան, երկիրը սկսեց
պէսպէս ծաղկակեր ու խոտեր բուսցնել, և գարնան հետ
միասին կառավարութեան, քիւրդ ու թիւրք հասարա-
կութեանց սրտերնուն մէջ հայ տարրը ճնշելու, հարստա-
հարելու և կողոպտելու գաղափարը կ'աճի:

Արդէն ամբողջ տարւան ընթացքին մէջ կեղեքիչ,
անողորմ հարկահաւաքները անպակաս են հայ գիւղերէն:
Հիմա աւելի շատ և խիտ կերպով կ'երթեկեն, մարդ-
կային՝ զինուորական, ոչխարի և կալածոց տուրքերէն
զատ՝ եղներէն, կովերէն, գոմէշներէն, ձիերէն և էշերէն
ու իւրաքանչիւրին տասնական զուրուշ տուրք կը պա-
հանըրի: Տարիներէ ի վեր արկածեալ և անկարող ժո-

ղովուրդը իր ունեցած չունեցածը ծախէ՝ դեռ մաս մ'ալ
տալիք կը մնայ աւազակապետի սնդուկին:

Հարկահաւաքները ընդհանուր ժողովուրդը իրենց
պարտատէր ըրած են, տարիներէ ի վեր ապօրինի տոկոս-
ներով և նախապահանջներով: 1 ոսկիի ամսական տոկոսը՝
5 լըշ. ու մէկ գլուխ շաքար. և մէկ ոչխարի գառին՝
գարունը 10 լըշ. կուտան՝ աշնան պահանջելու պայ-
մանաւ: Ցանքէն եկած արդիւնքը կը հարկադրուի տալ
անխղճին և ընտանիքը կրկին անօթի, մերկ և կարօտ
թողուր: Անգութ վաշխառուներու առնելիք պահանջելու
ձևը բողբոջին անտանելի է. կը հաւաքեն մի քանի ըն-
կերներ, ձիաւորելով կիրթան կ'իջնեն պարտատէրերու
մէկուն, ըսելով՝ «շուտ մեր իրաւունքը բեր, որ ձիերը
դուրս քաշենք»: Տան էրիկ մարդիկը չարութիւնները սա-
քերնին ամրացնելով, մէկը եղբ կը ձգէ առաջը քա-
ղաք տանել ծախելու, միւսը կ'իյնայ գիւղէ գիւղ պա-
կասորդը լրացնելու համար փոխառութիւններ ընելու
ևն: Տանը մէջ կը մնայ անտէր և անպաշտպան ընտա-
նիքը՝ ծառայելու անգութներու հրամաններուն...

Հայ գիւղերը աշնանէ ի վեր արդէն դուրս եին իբր
թէ պաշտպան ոստիկաններ. իրօք հայերի ընթացքը
հսկելու և իրենց քսակները լեցնելու համար էր դա.
գիշերն իսկ գիւղերու ներսը և դուրսը կը շրջապան,
մանրամասն քննութիւններ կը կատարեն, մինչև իսկ երբ
գիւղէ գիւղ խեղճ ու աղքատիկ երկրագործը իր պէտծ
քերը հոգալու համար կը հարկադրի երթալ: Մոլորահա-
հայը իր ձեռքը գիւղապետէն կ'ընթաց Վկայագիր պիտի
ունենայ կամ աւելի ճիշդ՝ քէհայի կամ իմամ մուխթարի
կնիքով վկայուած թուղթ, թէ ինչո՞ւ մաս կուգայ գիշերը.
Եթէ ոչ՝ մեծ տուգանքներու ու պատիժներու կ'ենթարկուի:

Օրերս Դալիբաբա գիւղէն ձերբակալեցան երկու
պատանիներ, 12 տարեկան, մեղադրելով որ դաշտը իբր
թէ հայկական երգեր երգած ըլլան: Զինուորները կը
բռնեն, կը խուզարկեն և կը զօրկեն Հասան-Գալէի բանտ:

Վ Ա Ն, 27 մարտ

Դրութիւններս շատ աննախանձելի է. կառավարու-
թիւնը մեր էֆէնտիների դործակցութեամբ, ամէն հնար
գործ են դնում կտրելու մեր արմատը: Խախտած են
բոլոր իրաւունքները և քաղաքը գրւած է պաշարման
վիճակի մէջ: Այս օրերս ահանաւոր քաղաքացիներ խառն,
պաշտօնական մի ժողով գումարեցին, որի մէջ առաջարկ-
ւած էին 7-8 միջոցներ յեղափոխականների դէմ, որոնք
և գործադրոււմ են այժմ ամենաստոր ձևով: Ոչինչ. մեր
համբերութեան բաժակը լցւած չէ դեռ...

Բացի փետրուարին գնացած գունդից, մարտի 6-ին,
8-ին և 13-ին գնացին նորից երկուսական գունդ զօրք
(թաքուր—գունդ—450-480 հոգի): Այս օրերս դար-
ձեալ գնալու է 4-5 գունդ: Մի քանի գունդեր գնում
են Սասունի հակառակ կողմեր, իսկ միւսները՝ ուղիղ դէպի
Մուշի դաշտը: Մի քանի աշիթթիների համիդիականներին
ևս հրամայուած է սլանալ այն կողմ: Բայց կարծեմ դեռ
հայտարարեցոց մի ցեղն է գնացել:

Ժողովուրդի մէջ, ինչպէս և պաշտօնեաներ ու տաճիկ-
ներ, այստեղ և գաւառներում, խօսում են, որ ապրիլի 15-ին
պիտի սկսուի յարձակում Սասունի վրայ, կոտորած անելու
բոլոր գիւղերում և լեռներում: Խիզնա Մուսա պէյ
շէիի մօտ 15-20 օր առաջ մի ժողով է գումարել:

ներկայ է եղել յայտնի արիւնարբու Սայիդ-Ալի. թէ ինչ է եղել ժողովի նիւթը — մեզ որոշ յայտնի չէ: Այնտեղից գրում են, որ կառավարութիւնը զինում է բոլոր քրդ-դերին և հրամայած է կոտորել բոլոր լեռնականներին: Ըստտխից մինչև Խազէն և յարձակել դաշտերի վրայ:

Մ Ո Ւ Շ, 5 մարտ

Քաղաքի ապահովութեան ու պահպանութեան համար նշանակած քովսէրներուն ամբաստանեցին, թէ հայերից գաղտնի ամսականներ կ'առնեն և քրիստոնէից ջերմ պաշտպան կը հանդիսանան: Այս տեսակ միջոցներով յաջողեցան մարդոց իրենց պաշտօններից հեռացնել: Քովսէրները Բաղէշ տարւեցան դատելու համար: Իբրև իրենց յաջորդ՝ առայժմ եկան երկու բաղէշցիներ: Դատելու համար Բաղէշ տարւած քովսէրներէն մինը մանագիւրտցի Աւետիս վարժապետն է, որ կրօնափոխ ըլլալուն՝ Մահմատ էֆէնտի կը կոչուէր:

Վ Ա Ս Պ Ո Ւ Ր Ա Կ Ա Ն, 20 մարտ

Այս երկիրը, ուր մի ամիս առաջ բուռն փոթորիկ կըսպասէր և կառավարութիւնը կ'ուզէր ամենակտրուկ ձևով միանգամընդմիջ արմատախիլ անել յեղափոխականներին, այսօր մի զարմանալի կերպարանափոխութեան ենթարկուեց: Խուզարկութիւնները, բանտարկութիւնները, լըստութիւնները դադարեցին, — իհարկէ կարճ ժամանակով, — կասկածելիներին ներումն է շնորհուում, բարձրից հեռագիր է ստացուել. «չդպէ՛ր ո՛չ մի քրիստոնեայի մազըն անդամ»:

Մի ամիս առաջ Էրզրումից, Երզնկայից, Բաղդատից և այստեղից գունդ-գունդ զօրքեր էին գնում Սասունի պաշարումը խտացնելու, և այսօր-վաղուայ յարձակման լուրին էինք սպասում ամէն օր: Այժմ այդ լուրերը դադարեցին: Այժմ լուր է պտտում, որ Կ. Պօլսոյ պատրիարքը (?) գալու է Սասուն յեղափոխականներին համոզելու... մի շշուկ, որ ցոյց է տալիս, թէ ինչ տեսակ խաբուսիկ լուրերի շտեմարան է դարձել երկիրը...

Օրերս էլ լուր է տարածուել իր թէ հեռագիր է եկել Սասունի պաշարումը վերացնելու (?): Քաղաքումս զօրք չի մնացել (հազիւ 500-800, մինչդեռ առաջ 3,000-3,500). փոքր մասը գնացել է դէպի Բայազէդ, մեծագոյն մասը Սասուն...

Գիտէ՞ք, ինչպէս են բացատրում այդ բոլորը կառավարչական շրջաններում: «Անգլիան, ասում են նրանք, երկիւղ կրելով ուսական միջամտութիւնից, հրահանգել է Թիւրքիային՝ տեղի չտալ առայժմ ո՛չ մի աղմուկի և խռովութեան»...

Տաճիկ կառավարութեան այժմեան խաղաղ ու լուռ գործունէութեան մէջ վտանգաւոր դիտումն է կայ. իր ներողամտութեամբ ու խաղաղ ընթացքով նա ուզում է անշուշտ յանկարծակի բերել ժողովուրդը՝ անպատրաստ պահել միամտացնել ու այդպիսով մի հարւածով վերջ տալ հայկական շարժման: Այ՛ն նրանց, ով կը խաբւի...

Բ Ա Ս Շ Ն, 12 ապրիլ

Կառավարութիւնը նորերս յայտարարել է Բասնի բոլոր հայ և քիւրդ գիւղացիներին, որ «եթէ ջան-ֆէդայիներ երևան գան ձեր մէջ, դուք նրանց հետ կուելու իրաւունք չունիք և ոչ էլ ընդհանուր հաւար տալու»:

այլ միայն պէտք է իմաց տաք զօրքի հրամանատարին: Թողէք, որ զօրքը նրանց զսպէ՛: Բերանացի յայտարարութիւնները այսպէս են, իսկ գաղտնի հրամաններ ու բանակցութիւնները քրդերի հետ...

Յայտարարւած է բոլոր հայ գիւղացիներին, որ առանց գիւղի ոստիկանի թոյլտուութեան իրաւունք չունենան գնալ մօտակայ գիւղը և որ գնալու և վերադառնալու դէպքում՝ պարտաւոր են ներկայանալ ոստիկանին:

Կ Ա Ր Ի Ն, 6 ապրիլ

Նորից մէկ թափուր զօրք ճանապարհ ընկաւ դէպի Մուշ: Այս ամսին ընդամէնը Կարինից գնացել են 3 թափուր զօրք, մի թափուր զօրք էլ 2 օր է ինչ բքարգել եղած են Սև-սարում և չեն կարողանում առաջ գնալ: Հրաման է ստացւած, որ դարձեալ 1,600 զինուոր ուղարկւի դէպի Սասուն:

Տ Ա Ր Օ Ն, 26 փետրւար

Հայ հասարակութեան այժմեան աղիողորմ ու կեղեքեալ վիճակը կը շարունակուի, — պանդուխտներու վերադարձին արգելումը, հայոց կալւածներու գրաւումը, հարկահաններու եռապատիկ դանձումները, կանանց և տղայոց դէմ իգործ դրւած խոշտանքումները, միւլթեզիմներու յափշտակութիւնները, դատարանի միակողմանի վճիռները, հին ու նոր չարիքներու նորագոյն կազմակերպութեան ներքին մշակումը ևն ևն:

Հայ յեղափոխականները կը պատրաստուին ինքնապաշտպանութեան: Իսլամներու սպառազէն ու սպառնալից վիճակը, որ կայծի մը կը սպասէ պայթելու, ահարկու խթան մը եղած է հայ ժողովրդին ալ՝ իր գլխուն ճարը նայելու և ինքնապաշտպանութեան միջոցներ ստեղծելու: Ի՛նչպի այս կէտ լարւած են մտքերը թէ Սասնոյ և թէ մանաւանդ Մշոյ դաշտի և յարակից կարգ մը գաւառներու մէջ: Ինքնապաշտպանութեան այս գաղափարը, որ ծագում առած է իսլամներու սպառազինութիւններէն, վերջիններու ազդած սարսափին համեմատութեամբ՝ ահագին ծաւալ գտած է հայ ժողովրդին մէջ, քաղաքը, գիւղերը, ամէն կողմ, ամէն դասակարգի և ամէն հասակի տղամարդոց մէջ: Ինքնապաշտպանութեան կարևոր գործին համար իւրաքանչիւր հայ անհատ իրեն որոշած բեռը կամ պարտքը՝ որքան որ իր կարողութիւնը կը ներէ՝ ընդունած է և շատերը կ'աշխատին ունեցածին կէս-գնով ծախել նոյնիսկ հողերը գրաւ գնելով, ձեռք բերել զէնք մը, զոր կը ծախեն չէրքէզներ, քիւրդեր, նոյնիսկ թիւրքեր եռապատիկ և քառապատիկ գնով, չնայելով որ ծախւած զէնքերը յաճախ կեղծ ու չգիւմացող բաներ են: Մինչ մէկ կողմէ հարկահաւաքները տղուկի նման անոնց արիւնը կը ծծեն, միւս կողմէ՝ երանգուն կերպով յառաջ կը տարւի ինքնապաշտպանութեան գործը: Ափսոս, հազար փոսոս միայն, որ զէնք չի գտնուի. յեղափոխական կազմակերպութիւնը հազիւ իր պէտքերուն կրնայ բաւարարութիւն տալ:

Տեղական կառավարութիւնը իրազեկ եղած է ամէն կերպով և իր խորհրդաւոր լուծութեամբ կը հսկէ անցած դարձածին վրայ: Սակայն հայ ժողովրդին ամէն տեսակ յոյսեր, խրատ ևն՝ այլևս անօգուտ են: Յուսահատութիւնը ծայրայեղութեան հասած է. «մենեւիլ ապահովութիւնը ծայրայեղութեան հասած է. «մենեւիլ ապահովութիւնը ծայրայեղութեան հասած է. «մենեւիլ ապահովութիւնը ծայրայեղութեան հասած է. «մենեւիլ ապահովութիւնը ծայրայեղութեան հասած է»:

Թեան գրողներու շնորհիւ իսլամ տարրերն ալ այնքան դիւրագրգիռ վիճակի մէջ են, այնքան կազմ ու պատրաստ, որ անդորրութիւնը և հայ ժողովրդի կեանքը թեթև հովէ մը կախած է: Արդէն պատեհ ու անպատեհ առթիւ չեն քաշիր հայերուն սպառնալէ, թէ «ձեր օրերը համրած են, քիչ ատենէն զձեզ պիտի ջարդենք, կոտորենք»: Կարևոր դէպքերու նախատեսակին մէջ կը գտնուինք...

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր
Ն Ա Մ Ա Կ Կ. Պ Օ Լ Ս Ե Ն

Տ մայիս

Յուզիչ լուրեր... Սուլթանի վերջին ծրագիրը Սասունի մասին...
Ոստիկանական արկածներ.

Երկրպի շրջանակներուն մէջ երևակայական լուրեր կը պտտեցնեն. «Ռուս կառավարութիւնը վախնալով կովկասեան հայերու շարժումներէն, վերջին ուսական հարստահարութիւններուն առթիւ, և կասկածելով, որ հայերը կրնան կաթողիկոսութիւնը փոխադրել Թիւրքիա, հայ յեղափոխական խումբեր կազմակերպած է և թոյլ տւած է անոնց թրքական սահմանագլուխը անցնել ու հոն խռովութիւններ, շփոթութիւններ հասնել»: Ռուսական կառավարութեան նպատակն է, ըստ Երկրպիական տրամաբանութեան, թիւրք կառավարութիւնն ու խուժանը, ինչպէս նաև քիւրդ, չէրքէզ, եզիտ, լէզկի տարրերը հայերուն դէմ գրգռել և հայկական նոր կոտորած մը ստեղծել, որով իրաւունք ունենայ ըսելու թէ՛ ահաւասիկ թիւրքերը կը իրարեան հայերը և այսպիսով միջամտել Թիւրքիայի գործերուն և ստեղծել նոր ու լուրջ բարդութիւններ:

Հարկաւոր է միթէ ըսել որ այս պրոյեկտ մէջտեղ նետուած է սուլթանին և իր համախոհներուն կողմէ, արդարացնելու համար, ով գիտէ ինչ նոր դժոխային ծրագիրներ նոյն կոտորածներու, որոնց մասին ամենահաւաստի աղբիւրներէ ստացւած տեղեկութիւնները շատ քիչ կասկածների տեղիք կը թողնեն: Սպասենք նորանոր դէպքերու, աւելի պարզ տեսնելու համար ժողով պալատ: Աւելորդ չ'ըլլայ թերևս հոս յիշել Երզրումի ուսական հիւպատոսին խօսքերը նոյն քաղաքի հայ եկեղեցական իշխանութեան ներկայացուցիչներուն ուղղած՝ Բասենի կուրն առթիւ. «Հայերը պէտք է հանգիստ կենան առայժմ. միմիայն Ռուսիան է, որ կրնայ հայկական խնդրին փափագելի լուծումը տալ (") և որովհետև Ռուսիա հիմա զբաղած է Ծայրագոյն Արևելքի մէջ, չկրնար իհարկէ միջամտել Թիւրքիոյ գործերուն և հայերը պարապ տեղը կը ջարդուին»:

Պէտք կայ բացատրութեան...

Սուշի և Սասունի շրջականները բնակող քիւրդ ցեղակա մը գրած է Երկրպի թէ ինք մինակ կարող է բողոքովն ոչնչացնել հայ տարրը այդ տեղերէն, միայն թէ իրեն պէտք եղած դրամական և զենքի օգնութիւններ ըլլան: Սուլթանը, աւելորդ է ըսել, աւելին չէր ուզեր, իր այնքան սիրած նպատակին հասնելու համար: Նոյն ցեղակա տին անմիջապէս կը ղրկւի մեծաքանակ դրամ, զէնք և ռազմավթերը: Հայերու կեանքը վտանգի մէջ է, գուցէ և կոտորածը մտայնուտ: Ով պիտի արգիլէ սուլթանին արիւնուշտ ծրագիրներուն գործադրութիւնը...

Համիդի սովալուկ պաշտօնեաները այս օրերս նոր օրեր գտան Պոլսոյ մէջ: Ահաւասիկ դէպքը.

Երկու շաբաթ առաջ, իրիկուն մը, անծանօթ անձ մը կը դիմէ Իսկիւտարի Ս. Կարապետ եկեղեցին և կ'ուզէ ժամակոչին յանձնել նամակ մը, տիկին Աւգերի հասցէին: Ժամակոչը չ'ուզեր ընդունել նամակը և կ'ուզէ կնոջ տունը ցուցնել անծանօթին: Անծանօթը կ'ըսէ թէ ինքը չկրնար գտնել տունը և նամակը կը ձգէ ժամակոչին, ըսելով որ եթէ կ'ուզէ թող տանի: Վերջինս ալ կըստիպւի նամակը տանել հասցէին: Տիկին Աւգերի նամակի բանարով կը շարի կը մնայ: Այդ նամակին մէջ ըսւած էր որ տիկին Աւգերի ծանօթ մէկ տեղը զէնքեր կան պահած և կը խնդրէր որ այդ զէնքերը առնելով մօտակալ պարտիզին մէջ ցուցած տեղը դուրս, ուրկէ անծանօթները այն զէնքերը պիտի առնէին: Ստորագրուած թիւն (յեղափոխական մի ինչ որ կուսակցութեան): Տիկին Աւգեր, որ քոյրն է նորատունկեան էֆէնտի, պաշտօնեայ բարձրագոյն դրան և ատենապետ հայոց քաղաքական ժողովին, ուղղակի կը դիմէ եղբորը՝ նոյն շարունակ նորատունկեանին կը պաշարէ և ուղղակի նամակը կը տանի Պէշկիմաշի կառավարիչ Հաճի-Հասան փաշային: Կըսկսին ձերբակալութիւնները: Նախ կը տանին եկեղեցիին ժամակոչները և քանի մը հոգի ևս թաղէն:

Այս դէպքը ազատ ասպարէզ կուտայ սովալուկ թիւրք պաշտօնեաներու քաջագործութիւններուն, որոնք կըսկըսին նախ իրենց յաւէտ պարսպ քսակը լեցնել և յետոյ յազուրդ տալ իրենց անձնական հակառակութիւններուն և վրէժխնդրութիւններուն: Այս կարգէն է ձերբակալութիւնը վերոյիշեալ Ս. Կարապետ եկեղեցու թաղական խորհրդի անդամներէն՝ Պէզպեան և Նաուլեան անուն անձերուն, որոնց դէմ հակառակութիւն ունէր երկար ատենէ իվեր Իսկիւտարի կառավարչին աներձագը, ծանօթ սրիկայ մը, որ կարևոր պաշտօն մը ունի նոյն կառավարութեան մէջ: Պէզպեան և Նաուլեան ազատ կ'արձակուին, սակայն, երկօրեայ բանտարկութենէ ետքը: Միւս ձերբակալները դեռ բանտին մէջ կը քաւեն իրենց չգործած մեղքերը: Ով կրնայ ըսել թէ, այս նամակը գործը չէ սուլթանին չափազանց եռանդուն մէկ ստրուկին, եթէ ոչ նոյն ինքն սուլթանի ներշնչման:

Կ Ո Վ Կ Ա Ս Ե Ա Ն Խ Ա Բ Ի Կ Ն Ե Ր

(ՈՍՆԵՆԾԹԵՐՈՐԻ ՆԱՄՈՆԿ)

Ս. Պետերբուրգ, 4 ապրիլի 1904

Տասնութ տարի առաջ, 1887-ին, երբ կովկասեան քրիստոնեայ ազգաբնակչութիւնը ենթարկեց զինուորագրութեան, ուսաց կառավարութիւնը՝ ժողովրդին քնացնելու նպատակով՝ յայտարարեց որ տեղացի զինուորները հայ թէ վրացի, Ռուսաստանի ներքին նահանգները չեն ուղարկուի, այլ առանձին զօրաբանակներ կազմելով, կը տեղաւորեն հայրենի երկրում, Կազբէկի և Արարատի գեղատեսիլ հովիտների մէջ:

Բարձրագոյն խոստումն էր: Պէտք էր կատարել: Եվ կատարեցին: Բայց որքան տևողական և ի՞նչ չափով մնայուն եղաւ նա: Ահա հարցը: Նա եղաւ նոյնքաւ տևողական և նոյնքան մնայուն, որքան ուրիշ շատ

բարձրագոյն խոստումներ, տրւած գահի բարձրութիւնից: Հազիւ մի քանի տարի անցած՝ բարձրագոյն խոստումը դրժւեց: Եւ ինչ կայ այդտեղ ամօթալի կամ ստոր: «Թագաւորը երգւեց, թագաւորն էլ դրժում է իր երգումը», — ահա այն սինիլի սուբբերը, որ արտասանեց մեծ իշխան Միխայէլ՝ Ֆինլանդական պատգամաւորութեան առջև, բաղկացած 500 հոգուց, որը Հելսինկիֆորսից Պետրոս Մեծի հիմնած քաղաքն էր եկել՝ բողոքելու՝ յանուն Ֆինլանդական սահմանադրութեան՝ «իկոլայ 11-ի օգոստոսի առ ուխտագրութեան դէմ: «Թագաւորը խոստացաւ, թագաւորն էլ յետ է վերցնում իր խոստումը», ասացին երեւի միւս մեծ իշխանները, իբրև պատասխան այն բողոքներին, որ լուում էին կովկասեան սահմաններից, երբ կառավարութիւնը ոտի տակ տւած անցեալ որոշումը, սկսեց տեղացի զինւորներին, մանաւանդ հայերին, փոքր առ փոքր կովկասից դուրս տանել և ուղղել դէպի այն հեռու նահանգները, որոնք թէև նոյն պետութեան մէջ, բայց իրենց կլիմայով և պայմաններով ոչ միայն հաճելի չեն հարաւացուն, այլ կատարելապէս կործանիչ թէ առողջութեան և թէ կեցութեան ընդհանուր տեսակէտից:

Ինչ էր պատճառը: Արդեօք այն, որ կովկասեցի զինւորը պետական պարտք չունէր կատարելու իր երկրի մէջ, թէ այն, որ նրա ներկայութիւնը և զէնքը անհրաժեշտ էին ներքին նահանգների անդորրութիւնը ապահովելու համար: Ամ թէ այն գուցէ, որ հայրենի երկրի սահմաններում տեղացի զինւորը տւեց անվստահութեան ապացոյցներ, նշան՝ որ նա հաւատարիմ չէ գահին և նրան վստահել չէ կարելի՝ վտանգաւոր ընդհանրին:

Եւ ոչ մէկը դրանցից: Ընդհակառակը: Նոյնիսկ ամենաողբերգական ըրպէներին, արտասուքի այն ծանր վայրկեաններին, երբ հայ զինւորին հրամայում էին հրացան բռնել իր եղբոր, հարեանի, քաղաքացու դէմ, երբ նրան ուղարկում էին զէնքի ուժով փակել տալու հայկական դպրոցները կամ երբ ոստիկանների մշտափակ դիւանատներում սարքած հայկական ապստամբութիւնը զսպելու համար, նոյն հայ զինւորներին տանում էին դէպի հայաբնակ թաղերը կամ կրօնական համախմբումների վայրերը, — ամէն տեղ և ամէն անգամ նրանք ցոյց տւեցին, որ դեռ այնքան հաւատարիմ են և այնքան ստրուկ զինւորական կարգապահութեան, որ հեռաւորապէս անգամ չեն մտածում ըմբոստանալ և անհնազանդութեան ճամբան ոտք դնել...

Փաստերը փայլուն էին: Սակայն ո՞վ է այս դժբախտ երկրում փաստերին ակնը կախում: Փաստը իր համար, հրամանը իր համար: Մէկը նոյնքան կապ ունի միւսի հետ, որքան բռնապետութիւնը՝ արդարութեան հետ: Շատ առաջ և բոլորովին այլ առիթներով վճուած է եղել, որ տեղացի զինւորներին իրենց երկրի մէջ պահելը «վստահելի չէ պետական շահերի տեսակէտից», և ահա հիմնւած այդ անցած վճուի վրայ՝ դրժեցին տւած խոստումը և քշեցին տեղացի զինւորներին այլ նահանգներ...

Ասակածը այդ անգամ էլ յաղթանակ տարաւ: Եւ այդ այն տարիներին, երբ համարեա գոյութիւն չունէր «հայկական շարժումը», երբ Արարատի շուրջը դեռ տեղի չէր ունեցել և ոչ մի փաստ, որ գէթ ձեւականօրէն արգարացնէր յուրը միջոցներին՝ դիմելու «պետական» անհրաժեշտութիւնը:

Բայց ահա երկնակամարը մթնագունեց. հորիզոնի

վրայ քաղաքական ամպերի նշաններ նշմարեցին. տեղ տեղ փայլատակեց յեղափոխական կայծակը, հեռուն, շատ հեռուն հրացանի ձայներ լսեցին, պայթեց նոյնիսկ ուումը և սարսափահար բռնապետութիւնը հասած համարեց վճուական ժամը՝ «ամենալուրջ միջոցներ» ձեռք առնելու: Շտաբների մէջ ժողովներ եղան. սպաները կանչեցին գաղտնի խորհրդակցութեան. «նորին գերագանցութիւնները» հայրդագրութիւններ պատրաստեցին, մի խօսքով՝ ճահիճը ալեկոծւեց...

Եւ այժմ, նոյնիսկ զինւորը, այդ ամենատգէտ և միաժամանակ ամենապատահելի զանգառը, որի վրայ ամբարցած են գահի ոտքերը, նա, որ իր պինդ մէջքի և աւելի պինդ գլխի վրայ այնքան բարձր է պահում ճնշման ամենամեծ նշանակը — միապետութիւնը, դարձել է վտանգաւոր, ենթակայ յարամիտ պրօպագանդի, հետևաբար արժանի թերահաւատ վերաբերմունքի ու խստագոյն հակողութեան:

Եւ ի՞նչ հայ զինւորներ: Չեղանից քիչերը բախտ ունեցան ազատ մնալու տարագիր կեանքից, քիչերը արժանի եղան իրենց հնգամեայ տաժանակիր ծառայութեան ընթացքում վայելելու հայրենի երկրի օդը, ծանօթ ժողովուրդի հարեանութիւնը: Եւ այժմ կամ սրանից յետոյ՝ այդ փոքրածիւր յբախտաւորները՝ և նրանց յաջորդները, ամենայն հաւանակաւնութեամբ պէտք է նոյնպէս հեռանան, գնան այլ երկրներ, օտար նահանգներ, դէպի այնպիսի տեղեր, ուր հայութեան հետք անգամ չկայ:

Այդ մտայն տխուր ապագայի նախանշանը կարող էր համարել հետևեալ գաղտնի շրջաբերականը, որ թէև «գաղտնի», բայց անցել է գահի անհանգիստ հակառակորդների ձեռքը և ուղարկում է «ազատ» սպարան, ուր չի թագաւորում տպարանական տեսուչը, որտեղ անզօր է ամենազօր գրաքննիչի թաթը և որտեղից նա պիտի անցնի լոյս աշխարհ՝ ի գիտութիւն արգելած թերթերի ծարաւ հասարակութեան...

Արդացէք այդ գաղտնի թուղթը.

Զ. Մ.

ԿՈՎԿԱՍՍԵԱՆ
ՁՐՆԱՌՐԱՄԱՆ ՇՏԱՐ
Գ.Ա.Գ.ՏՆԻ ԲԱԺԻՆ
№ 4593
1908, դեկտեմբերի 8
Թիֆլիս

ՊԱՏՃԷՆ
ԻՆՎԵՏԻ ՇՐՋԱՐԵՐԱԿԱՆ
Կովկասեան գորաքանակի
Հրամանատարին

Միջոցներ չըման գօրքը ազատ պահելու հայ յեղափոխական պրոպագանդի ազդեցութիւնից.

«Մի քանի տարի սրանից առաջ կովկասեան երկրի հայ ազգաբնակչութեան մէջ սկսեց նկատուել Հայաստանի ինքնուրոյնութեան անիրականալի գաղափարի մի առանձին զարթոնում:

«Շնունդ առան հայ կօմիտէներ, որոնք հրապուրանքով և սպանալիքներով սկսեցին եռանդագին արծարծել այդ գաղափարը և չարամիտ կերպով ուղղել այն՝ դէպի ատելութիւն Ռուսաստանի դէմ ընդհանրապէս և մասնաւորապէս այն բոլորի դէմ, ինչ որ ռուսական է:

«Կովկասեան շրջանի գօրքերը, որոնց շարքերում ըստ առաջնոյն աղինու, հաւատարիմ և անձնէր կերպով ծառայում էր հայ զինւորը, երկար ժամանակ մնում էին

Հայկական պրօպագանդի ազդեցութիւնից դուրս: Սակայն վերջին ժամանակներս չարափնաս ինտելիգենտ պրօպագանդիստները եռանդով ուղղում էին իրենց յանցաւոր գործունէութիւնը շրջանի զօրքերի վրայ: Քահանան, ուսուցիչը և մինչև իսկ պետական պաշտօնեան—բոլորը, ինչպէս երևում է, միանում էին, որպէս զի յաղթահարեն Հայ զինուորի մէջ նրա համոզմունքը երդման սրբութեան մասին և թեքեն նրան դէպի յանցաւոր փախուստ ծառայութիւնից ու դէպի գողութիւն՝ զէնքի և հրանիւթ մթերքների: Թէպէտ և Հայ-զինուորների մէջ գտնւեցին այնպիսիներ, որոնք ոչ միայն դիմադրում էին խառնակիչներին, այլև յանձնում էին նրանց իշխանութեանը, այնուամենայնիւ գտնւեցին, դժբախտաբար, և այնպիսիներ, որոնք հետևելով ստայօգ ազիտացիային, հեռանում էին պահակաւորներից տանելով զէնքեր՝ և մինչև իսկ կազմում էին գաղանի ակումբներ:

Մեզունելով ծայրագոյն կարևորութիւնը և այժմէութիւնը ամենաեռանդուն կուսի՝ ընդդէմ այդ նորածին չարիքի, շրջանի զօրքերի ժամանակաւոր հրամանատարը յանձնարարել է ինձ՝ խնդրել բոլոր զօրաբաժինների աւագ ու կրտսեր գլխաւորներին՝ ուղղել իրենց բոլոր ջանքերը և բոլոր ուշադրութիւնը՝ հեռու պահելու մինչև օրս ազնիւ մնացած ցարի Հայ ծառային՝ ամէն տեսակ հրապօրից, որ կարող է բերել նրան քաղաքական ազիտատօրների չարամիտ պրօպագանդը:

Սրա հետ միասին նորին Գերագանցութիւն գեներալ լէյտենանտ Քրեզէ բարեհաճեց յանձնարարել զօրքերին մի շարք հետևեալ միջոցներ, որոնց ամբողջական գործադրութիւնը կ'ունենայ, անտարակոյս, բարերար հետևանք գործի համար:

1) Պրօպագանդի դէմ կուսելու համար՝ զօրաբաժինների գլխաւորները կարող են օգնութեան կանչել Հայ-օֆիցերներին և յանձնարարել նրանց՝ ազգել իրենց հեղինակութեամբ կրօնակից զինուորների վրայ:

2) Անհրաժեշտ է բոլոր միջոցներով խրախուսել և վարձատրել այն Հայ-զինուորներին, որոնք իբրև կատարումս իրենց ծառայական պարտքի և երդման՝ երևան կը բերեն ու կը ներկայացնեն զինուորական վարչութեանը այն գաղանի գործիչներին, որոնք կը փորձեն խառնակութիւն ձգել զօրքերի մէջ:

3) Մտերիմ խօսակցութիւնների ճանապարհով հարկաւոր է բացատրել Հայ-զինուորներին՝ պրօպագանդիստների գաղափարի էութիւնը և բոլոր յանցաւորութիւնը ու միևնոյն ժամանակ հասկացնել նրանց երդման սրբութիւնը և այն օգնութիւնը, որ եղել է Ռուսաստանի կողմից, որը միայն իր ջանքերով ազատել է Հայերին այն ծանր վիճակից, որի մէջ նրանք գտնուում էին Թուրքիայում ու Պարսկաստանում, և որը, իբրև նրանց Հայրենիք, ապահովել է նրանց բարօրութիւնը:

4) Աշխատել ներգործել նրանց վրայ այնպիսի եղանակով, որ նրանք իրենք իրենց և իրար պաշտպանեն պրօպագանդից և յանցաւոր յափշտակումից, որպէս զի նրանք հսկեն միմեանց վրայ, յիշեցնելով, որ նրանցից մէկի յանցաւորութիւնը կարող է վարկաբեկ անել վարչութեան աջքում նրանց բոլորին:

5) Ցոյց տալով Հայ զինուորներին հնարաւոր վստահութիւն, միաժամանակ նշանակել նրանց վրայ, զօրքի մասերում, ամենախիստ հսկողութիւն, նպատակ դնելով

գլխաւորապէս ազատ պահելու նրանց, հէնց իրենց օգտի համար, միասակար ազդեցութիւններից:

6) Առանձին զգուշաւորութեամբ թոյլ տալ զօրանոցներում տեսակցութիւն Հայ այցելուների հետ:

7) Զօրաբաժնի գլխաւորը պէտք է իմանայ թէ ո՞րտեղ է լինում և ո՞ւմ է այցելում, արձակուրդի ժամանակ, իր իշխանութեան ենթակայ Հայ-զինուորը:

8) Կրկնապատիկ ջանք գործ դնել, որ բոլոր Հայ զինուորները ուսուերեն խօսեն. դրա համար հարկաւոր է պահանջել՝ որ տեղացի զինուորները իրար մէջ ուրիշ լեզուով չխօսեն, բայց եթէ ուսուերեն:

9) Տեղացի զինուորներին, ինչպէս զօրաշարքերում, նոյնպէս և քնելիս, տախտակամածների կամ մահճակալների վրայ, մասերի բաժանել և խառնել ուսուների հետ, թոյլ չտալով, որ միանան և առանձնացած խմբեր կազմեն:

10) Առանձնապէս աշխուրջ ուշադրութիւն պէտք է դարձնել այն Հայ զինուորների վրայ, որոնք ապրում են զօրագնդային առանձին կացարաններում, ինչպէս են՝ հացագործները, արհեստաւորները, գրագէտները և զօրագնդի տնտեսական կազմի այլ անձինք:

11) Հարկաւոր է ուշադրութեամբ հետևել, որպէս զի, համաձայն ներքին ծառայութեան կանոնադրութեան § 47-ի, զօրանոցների մէջ, զինուորների շրջանում, գործածուեն միայն այն գրքերը և տպագրական հրատարակութիւնները, որոնք վաւերացրած են զօրաբաժնի գլխաւորի ստորագրութեամբ:

12) Երբ կասկած ծագի, որ զօրանոցների մէջ մուտք են գտել միասակար բրօշուրներ ու կոչեր, չպէտք է վարանել մանրամասնօրէն խուզարկել զինուորների բոլոր իրեղէնները:

13) Ըստ կարելոյն աւելի զգաստ կերպով վերաբերել զօրաշարքերից դուրս եղող տարրերին, որոնք կարող են միասակար կերպով ազգել Հայ-զինուորների վրայ, ուշադրութիւն դարձնելով դրա հետ միասին Հայ քահանաների, ուսուցիչների և տեղական ինտելիգէնցիային պատկանող անձանց վրայ, որոնք այս կամ այն յարաբերութիւնն ունին Հայ-զինուորների հետ:

14) Այն մասնաւոր մարդոց վերահսկողութեան գործում, որոնք կարող են միասակար ազդեցութիւն ունենալ զօրախմբի մէջ՝ զօրաբաժնի ստոր հրամանատարները պէտք է համաձայնութիւն կայացնեն տեղական ազմիստրացիայի և ոստիկանութեան հետ, որպէս զի նրանց միջոցով՝ ըստ կարելոյն լաւատեղեակ լինեն պրօպագանդիստների վերաբերմամբ և կամ կարող լինեն նրանց աջակցութեամբ մօտիկից հսկել այն Հայ տների վրայ, ուր յաճախակի գնալ-գալ ունեն Հայ-զինուորները:

15) Եկեղեցի, որի ընտրութիւնը անում է գնդապետը և ուր ժամերգութիւնը կատարում է այնպիսի քահանայ, որի հաւատարիմ զգացումներին կարելի է վստահել, զինուորներին պէտք է ուղարկել խմբովին, ենթասպայի ղեկավարութեան ներքոյ, միևնոյն է, լինի նա ուսու թէ Հայ: Ծամերգութիւնը աւարտելուց յետոյ՝ զօրախումբը ամբողջ կազմով պէտք է վերադառնայ զօրանոց:

16) Աշխատել սահմանափակել այն Հայ զինուորների թիւը, որոնք երկարատև արձակուրդ են ստանում, և

17) Այն անձանց վերաբերմամբ, որոնք կասկածելի են զօրքի մէջ յեղափոխական պրօպագանդի փորձեր անելու տեսակէտից, տեղեկացնել զօրաբաժնի գլխաւորին:

Այն դէպքում, երբ ձեռք առնուող բոլոր միջոցները

չեն պատկերի լիակատար և վերջնական աջողութեամբ և այս կամ այն զօրաբաժնում այնուամենայնիւ երևան կը գան հերձուածողները, զօրաբաժնի հրամանատարը պարտաւոր է անմիջապէս արմատախիլ անել չարիքը՝ ձերբակալելով մեղաւորներին, կամ գործել ուրիշ, նրանից կարեւոր, միջոցներով:

«Դրա հետ միաժամանակ՝ պարտաւորութիւն է դրուում տեղեկացնել պատշաճաւոր իշխանութեան և, աւանձին կարևորութիւն ունեցող դէպքերում, հաղորդել ժանդարմային վարչութեան:

«Շրջանի զօրքի ժամանակաւոր հրամանատարը, յանձնարարելով ինձ՝ ի լրումն իմ շրջաբերական գրութեան դեկտեմբերի 4-ից ներկայ թւականի, № 4384, հարկուել 26-րդ Գերազանցութեան՝ վերոյիշեալի մասին, յօրս է տածում, որ ամէն մի զօրաբաժնի գլխաւոր, բացի վերև յիշածներից, կը գտնի նաև ուրիշ շատ միջոցներ ու ձևեր, որպէս զի զինուորին իր երդումից և պարտաճանաչութիւնից շեղող պրօպագանդը մուտք չգործի իրեն յանձնուած զօրախմբի մէջ և որ հայ-ղինուորները ապագայում էլ մնան նոյն վստահելի և պարտաճանաչ ծառայողները, որպիսին նրանք եղել են մինչև այժմ»:

Խոկախանը ստորագրեց՝

Հասարակ վիճակը, գեներալ-լէյտենանտ ԲԵԼԵԱՎԱԿԻ ժնը է՝

Գլխ. աբխազական պաշտօն. պարուչիկ Վ. ԱՍՏՕՎԻԶ

Հարկաւոր է արդեօք ունէ մեկնութիւն աւելացնել այդ գաղտնի շրջաբերականին, որը կասկածի, մոլորման, երկիւղի, ինչպէս և գրգռած երևակայութեան անման փնջիկ է...

14 ապրիլի

Սահմանադրին նորից իրարանցում կայ: Սասունից և Մուշի դաշտից եկած լուրերը «իւր ածեցին կրակի վոյ» և կառավարութեան «եռանդուն» պաշտօնեաները մէկի տեղ հարկեր են տեսնում: Նոր խտուութիւններ, նոր պահակախմբեր, նոր շրջաբերականներ: Տիրող տրամադրութեան իբրև նմուշ կարող է ծառայել հետևեալ «բողոքովին գաղտնի» դօկումենտը, որը «բողոքովին գաղտնի» դիւանատներից անցել է գահին՝ նոյնպէս «բողոքովին գաղտնի» թշնամիների ձեռքը — ո՛վ դօք, չարաձճի յեղափոխականներ — և հետևաբար դուք կարող էք, անխուով կերպով, առանց յանցանքին մեղսակից լինելու մեղադրանքի, հրամեցնել կովկասեան հասարակութեան ի գիտութիւն: Այդ թուղթը, որ ամէն բան ասում է, հետևեալն է.

Ն. Գ. Մ.

ԿԱՏԱՐԵԼԱՊԵՍ ԳԱՂՏՆԻ

Դ Ի Ի Ա Ն

Կ Ա Ղ Ձ Ղ Ա Ն Ի

Գ. Ա. Ի. Ա. Ռ. Ա. Պ. Ե. Տ. Ի

Կարսի շրջանի զինուորական

№ 123

Նահանգապետին

27 փետրւարի 1904

Կաղզվան

«Նախիջևանի շրջանապետը, մի հաղորդագրութեամբ, գրուած փետրւարի 20-ից, № 33, յայտնում է ինձ, որ բերանացի, բայց վտարահան տեղեկութիւններից երևում է՝ թէ ներկայ փետրւարի 11-ին, Կարս քաղաքից Զիբնա գիւղն են եկել չորս անձանք՝ հայեր, աշխարհիկ շարով, որոնք գաղտնի կերպով հաղորդում էին երիտասարդներին, որ նրանք պատ-

րաստ լինեն, քանի որ նրանց իմաց կը տրւի, թէ երբ և ուր պէտք է համախմբուել: Այդ անձինք Ձիբնա գիւղից գնացել են Նախիջևան գիւղը, այցելելով այդ շրջանի մի քանի հայաբնակ գիւղերը: Նրանք ի միջի այլոց քարոզում են, որ Տաթևի և ամենայնպէս ժամանակը սխտեղ յերապիտակաւ կօմիտեների դարձուցութիւնները, քանի որ Ռուսաստանի ուշադրութիւնը դարձած է և, որ գլխաւորն է՝ զօրքը ուղարկած է դէպի հեռուոր Արևելք, իսկ Թիւրքիայում սխտած են լուրջ խառնակութիւններ, և իբրև թէ Անգլիան էլ շտապեցնում է նրանց, հայերին, ձեռնարկել իրենց գործողութիւնները, սխտելով Ռուսաստանում և այս սահմանից անցնելով Թիւրքիայի: Համապատասխան տեղեկութիւններին նայելով՝ կօմիտեները իրենց խմբերը կենտրոնացնում են Բագրատ և Անի գիւղերում, Կարսի շրջան, ու Կարսուղի գիւղում, Էջմիածնի գաւառ:

«Հաղորդելով վերոգրեալի մասին 26-րդ Գերազանցութեան, պատիւ ունեմ յայտնելու, որ դրա հետ միասին ինձ ենթակայ պաշտօնեաներին ուղարկել եմ հարկաւոր կարգադրութիւններ՝ ուժեղացնելու ինձ յանձնուած շրջանի հայ ազգայնականութեան վրայ եղած հսկողութիւն և առաջնորդել եմ Նախիջևանի շրջանապետին՝ ամենախիստ քննութիւն բանալ իմանալու, թէ ո՞վքեր են փետրւարի 11-ին Ձիբնա եկող հայերը:

«Բացի դրանից, իմ կողմից կարգադրութիւն է եղել՝ հիմնելու 7 հոգուց բաղկացած պահակախումբ Բագրատ գիւղում և ուժեղացնելու Ձիբնա գիւղի պահակախումբը, վերացնելով ժամանակաւորապէս Նախիջևան գիւղի պահակը»:

(Ստորագրութիւն)

Պէտք է կարծել, որ ինչիւրը «պահակախումբներից» գէնը կ'անցնի, որովհետև լուր կայ, որ սահմանի միւս կողմը, Էրզրում, թիւրքաց զօրագունդը ուժեղացրած է և Կարսի զինուորական իշխանութիւնը՝ տրւած հրամանագրի համաձայն, ինչ որ ծածուկ պատրաստութիւնների վոյ է: Ինչ է պատրաստում վարագործի յետևը... Դժուար է պատասխանել, որովհետև այս անգամ վարագործը խիստ անթափանցելի է: Ինչ որ պարզ տեսանելի է, այդ այն է, որ վերսկսեց ամենախիստ վերաբերմունք դէպի յաւիտենական դժբախտները — Թիւրքահայ գաղթականները:

«Որտեղից որտեղ — գրում է մի կովկասեցի բարեկամ — նորից դուրս ընկաւ խիստ հայաձանց գաղթականների և առհասարակ թիւրքահայերի դէմ թիֆլիս քաղաքից քշում են նոյնիսկ այնպիսիներին, որոնք տասն տարուց ի վեր այստեղ են հաստատուած և կանոնաւոր անցաթուղթ ունենալով 3 օր ժամանակ տեղից ուստահպատակութիւն ընդունելու, իսկ շատ պրիտապիներ այդ էլ չեն թող տալիս և պահանջում են՝ անմիջապէս հեռանալ քաղաքից: Դէպքեր եղան, երբ ստիկանները տներից դուրս թափեցին թիւրքահայերի շրթերը, իրեղէնները և կնքեցին դռները, աւելով՝ «կրէք ուր ուղում էք»:

Իսկ սահմանագրութիւն փակ է: Թիւրքահայերին քշում են, իսկ կովկասահայերին տանում դէպի բանտ կամ դէպի քարոյ: Ահա թւեր, քաղած մի մասնաւոր նամակից. «Ախալքալաքի գաւառից քարոյրած են Ռուսաստան 24 հոգի. 40 հոգի էլ բանտում են: Ախալքալաքի քարոյրած են առայժմ 18 հոգի. իսկ բանտերում եղածները բազմաթիւ են: Կարսից քարոյրածների թիւը 71 է: Համարեա բոլոր գիւղերից բանտարկածներ կան, մեծ մասամբ երեքփոխներ և տանուտէրներ, 2-3 ամսով, կօմիտայի արձանագրութիւնները՝ չստորագրելու համար: Էջմիածնի գաւառում, Ըմբրլինգի դէմ եղած փորձի պատճառով, կարնաւորած են 52 հոգի, Բանտերը լցւում են»:

Բանտեր, բանտեր, ե՛րբ պէտք է ձեր դռները փշուրն...

Է. ԱՎԵՆԻՆԻ

Կ Ե Ն Ս Ա Պ Ր Ա Կ Ա Ն

Ա Ր Մ Ե Ն Ա Կ Ղ Ա Զ Ա Ր Ե Ա Ն

(ՀՐԱՅՐ-ԳԺՈՒՔ-ՈՒՐԻԱԿԱՆ)

Կա էլ ընկաւ, սիրահարը հպարտ լեռների, որ նա ազատութեան կրակն էր բորբոքում, իբրև սպանիկ ու քարոզիչ իբրև խմբապետ և գործիչ: Աշխատեց հաստով և մեռաւ հպարտօրէն, կուրծքը թշնամուն տւած: Կրտսերը փնտրեց փնտրեց և, կեանքը՝ խրատու աղբ: Առաջնակայում այդ կեանքին, յի հրատարական գծերով, կը նւիրեն շատ էջեր «Գրօշակի» մէջ, գրած նոյնիսկ նրա ցաւակիցների ձեռքով, սրանք բաժանեցին նրա վեշտն ու պարծանքը, նրա առուստարներն ու յայլերը:

Հարազատ ծնունդ վշառփայլի (Մշտ գաշակցի էր նա), ապրած այն մթնոլորտում, որ ստեղծեց հայկական շարժումը, նա եղաւ ոչ միայն յեղափոխական զինավար, այլ ամենաշատ հոգեբանը հայ ժողովրդի: Մասնաշաղկապ հոգեբանութեան փորձեր էր շրջապատը: Կը կոտորուած ամբողջ խառնուրդ մէջ ոչ որքէր օջուրում ձեռք բերել այն լայն հեղինակութիւնն ու անպայման հասարակ, ինչ որ վայելում էր Մատենի աշխատաւորը: Այդ կողմից նա մի կախարհ էր, որ անհատապէս հեղութեամբ կարողանում էր մղել մարդկանց, նոյնիսկ թերահաւատներին, գէպի ամենադժուարին գործեր, գէպի անձնագրօթութիւն:

Աչքերը յառած հայկական ազատագրութեան նպատակակետին, որին նա մնաց միշտ հաստարիմ, եփած գործի մէջ և զեկավարած միմիայն մի քաղաքականութեամբ՝ յեղափոխական գործի քաղաքականութեամբ, նա պատրաստ էր ձեռք մեկնել ամենքին, սրանք նրա օգնութեանն էին զիմուտ, և աջակցութիւն ընդունել բոլորից՝ ուր գա նպատակայարմար էր, առանց կուսակցական խտրութեան: Կա նրա մտածողութեան բնորոշ գծերից մեկն էր:

Ապարտիզ կուռնը: Կա էլ ինչպէս և նոյն գործի ուրիշ մշակները, չըտեսաւ այն Մեծ Արշալոյսը, որին վշտոտ սրտով և հսկայական համբերութեամբ սպասում են սերունդներ սերունդների յետեից, լեռների կատարներին և բանտերի մութ խորշերում: Կա զգաց, որ կուրբ ճակատագրական է, և վախճանը՝ մտա: Զգաց, բայց յետ շնահանջեց: Ահա թէ ինչ էր գուշակում Սէմայի անխոխարինելի հերոսը մի նամակում, որ նրա վերջին «մնաս բարով» պէտք է համարել:

«Ղնկերներ», Մատեն, 27 փետրւար

«Օրէջօր ժողովրդի գրութիւնը կը վտարարանայ, կատարածի ձեռնարկներ կը ծրագրուին և փորձեր կը կատարուին: Այսպիսի պէր Բաղէշէն «ճան-պէղար» կառած հեծեալներով հասաւ Մաշի անկաւորեցաւ հայոց թաղերը: Տիգրանից Մեհակա էֆ. սնուն հարիւրապետը՝ 15-20 տարիաներով քիւրդ ցեղապետներու հետ խորհրդակցութեան սրտանում կը շրջի Գաշաի մէջ: Անշուշտ թրքական գէպեր մը շինելու ծրագրեր կը կազմի նոյն այս ձեռնայ միջոցին:

«Մշտ և Գաշաի յարաբերութիւնները խլած են, շուկան հինգ օր, իվեր հայերից ամպի է, առեւտրոր ամբողջապէս դադարած է, գեղե գեղ կըթի եկութիւնը արդիւրած է: Մեծ պահքի առաջին օր, Մատենի Ծաղրը գիւղի քոյկերը՝ միացած Մշտ թիւրք ասորի հետ՝ յարձակեցան շուկայի մէջ հայերս վրայ նպատակը լնկ կատարածի սկզբնապատճառ գտնաւն էր: Բանի գլուխ ու թե ջարդեցին: Կառ ճապր կրակի, հայ ազգաբնակիցներ այդ օրից փակուած կը մնայ թաղերու մէջ վախճանը մը է, չի գիտցելիր:

«Արլաի որ թիւրքերը հեռագրատանն երբէր չեն հետանար, անշուշտ կարծիքների վախճանակութիւններ կը կատարուին, զիսական ծրագրերը կը կազմէին: . . .

«Կը այսուհետև արևան ձայնը պիտի համնի ձեր ակունջին մեր նամակներս և անգեկազրերս փոխարեն...
« . . . Արշապետ և շեմ կրնար երկարել:
« Համբոյրներ և յարգանքներ»:

ՀՐԱՅՐ

Կը արևան ձայնը եկաւ, աւանդ, նրա նահատակման բոթաբեր ձայնի հետ. . .

Մտորանիկ



ՎԱԶԳԻՆԻ ՍԱՐՑԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ

(1897 թիւնն ՂԱՍԳՈՐԱԿԱՆ ԱՆՑՆՆԼԻՍ)

Խմբի անդամներից շատերը արդէն գոհացած են: Անդրանիկը (տես նկարը), որ այժմ կուռում է Սասունում, 1897-ին այդ խմբի մէջ պարզ զինուոր էր:

«Ռոջակի» 1897 թ. X 11-ի մէջ տըսւած են Սամաթիայի հերոսի կեանքի մանրամասները: Լուսանկարը այժմ միայն աւջողեց ձեռք բերել: Քերում մեր նրա վերջին նամակը, գրած Նահատակման նախորդ օրը, ին մի մտերմին.



Սիրելի իմ,

Ղալը հարսանիքիս օրն է... Ազատութեան ոգին թնեքը բաց անհամբեր ինձի կը սպասէ: Ներքէ որ առեմց քեզի կանխաւ լուր տարու, վերջնական որոշումս առի...

Կարօտագին համբոյրներով

Շ Ա շ Ե Ն

ԽԱՉԻԿ ԳՆՈՒՆԻ

(Շ Ա շ Ե Ն)

1865—1896

Ա Մ Ս Ա Լ Ո Ւ Ր Ե Ր

* * *

Անգլիայի արտաքին գործերի մինիստրութիւնը՝ Հայկական մի հիմնարկութեան կողմից Սասունի դէպքերի առիթով իրեն ուղղած հեռագրին՝ պատասխանել է հետևեալ գրութեամբ.

FOREIGN OFFICE

May 30th. 1904

Sir:

I am directed by the Marquess of Lansdown to acknowledge receipt of your telegram of the 21st instant. In reply to your request for the intervention of His Majesty's Government in Armenia I am to say that His Majesty's Ambassador at Constantinople and His Majesty's Consuls in Armenia are doing all they can to prevent excesses on the part of the Turkish troops.

I am, Sir, Your most obedient,
humble Servant,

T. B. Sanderson.

(Թարգմանութիւն)

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆ

Հունիս 30, 1904

Պարոն,

Ինձ հրահանգուած է մարտիկ Ղանադունի կողմից՝ տեղեկացնել ամիս 21 ղրիւած ձեր հեռագրի ստացման մասին: Ի պատասխան ձեր դիմումին՝ Նորին Մեծութեան կառավարութեան միջամտութեան վերաբերմամբ Հայաստանում՝ ես հրահանգ ունեմ անել, որ Նորին Մեծութեան դեսպանը կ. Պօլսում և Նորին Մեծութեան հիւպատոսները Հայաստանի մէջ անում են բոլորը, ինչ որ կարող են՝ թիւրք զօրքերի կողմից լինելիք ծայրահեղութիւնների առաջն առնելու համար:

Մնում եմ, պարոն, ձեր ամենախնայաւոր,

խոնարհ ծառայ

S. A. ՍԱՆԴԵՐՍՈՆ

*

Քրանսիական Նիմ քաղաքում, ապրիլի 7-10-ին կայացած «Քրանսիական Խաղաղութեան ընկերութիւնների» երկրորդ կոնգրէսը Հայկական և մակեդոնական հարցերի վերաբերմամբ ընդունեց հետևեալ որոշումը.

«Պ. Միլհոփ առաջարկութեամբ, Համաժողովը՝ միանալով Միջազգային Խաղաղութեան կոնգրէսների զանազան որոշումներին, վճռում է պահանջել յօգուտ Հայաստանի և Մակեդոնիայի ազգաբնակչութեան բերլինի դաշնագրի 61 և 23 յօդուածներով խոստացուած արտօնութիւնները»:

*

Մայիսի սկզբներին Գահիրէ քաղաքում տեղի ունեցած մի մեծ միտինգ օտարազգիների մասնակցութեամբ՝ յօգուտ Հայկական դատի: Միտինգը իր ընդունած որոշումը հաղորդեց անգլիական, քրանսիական, իտալական և ամերիկեան կառավարութիւններին:

*

Մայիսի 7-ին Բօստօնում կայացաւ նոյնպէս մի միտինգ Հայկական խնդրի առիթով: Քրանսիական յայտնի հրապարակախօս և հայասեր Ա. Լերուա-Բօլէ, որ հըրաւիրուած էր Ամերիկա համալսարանում մի քանի դա-

ասխօսութիւնների համար, մասնակցեց այդ ժողովին և արտասանեց մի վերին աստիճանի համակրական ճառ: Ժողովը դրած էր «Հայաստանի Բարեկամներ» կողմը և բուն ամերիկացիներից կազմուած ընկերութեան հովանաւորութեան տակ:

*

Ստացանք հետևեալ տեղեկութիւնը.

«Ալեքսանդրիայում Յունանի դէպքի առիթով կայացած հայկական միտինգի նախագահ Բարդուղիմէոս վարդապետը ստացել է անգլիական կառավարութեան կողմից նպաստաւոր պատասխան միտինգի հեռագրին»:

*

Ապրիլի 16-ին գրած մի նամակով հետևեալ տեղեկութիւններն են հաղորդում մեզ կարս քաղաքից.

«Վովկասեան աւազականոցներից մէկի վարագոյրը պատուեց: կարսի ոստիկանութիւնը խիստ իրարանցման մէջ է. ոստիկանապետ Խերխէուլիձէ ինքնասպանութեամբ վերջ տուց իր ցոփ ու անարգ կեանքին, կամենալով այդ կերպ պատուել այն յանցանքներից, որ կատարել է իր հինգամեայ ծառայութեան միջոցին: Ղոնդուած մի ծառայողի — ազգով յոյն — բողոքների հիման վրայ, խիստ քննութիւն է բացուած ոստիկանութեան մէջ: Ինչե՛ր ասէք, որ չեն կատարել այնտեղ: Ոճիրներ և զեղծումները այնքան շատ են, որ նահանգապետի նոր օգնականը չվարանց ուղղակի յայտարարել, թէ սա «պօլիցիալ չէ, այլ աւազակների խումբ»: Եւ այդ աւազակային խումբը այսքան տարիներ է իվեր իր ձեռքն է առել մեր վարչական գործերի ղեկը:

«Վովկասի մէջ եկեղեցական գործերի պատճառով ամէնից շատ տուժողը կարսն է եղել շնորհիւ այդ անարգ ոստիկանապետի և դրա հետ միասին անընդունակ նահանգապետի, որ խաղաղիք էր դարձել առաջինի ձեռքում: Լուրեր կան նոյնիսկ, որ գողութեան արդիւնքը բաժանուում էր բոլորի մէջ... Ել կօշկակար, էլ վաճառական, էլ դերձակ չմնաց, որ անմեղ տեղը 2-3 տարով բանտարկութեան կամ 4-5 տարով արքորի չմատնեն և բողոքն էլ ոստիկանապետի անձնական հաշիւների պատճառով: Եթէ մի կօշկակար երբեք համարձակել է ոստիկանապետի կնոջ կամ աղջկան ապառիկ կօշիկ չտալ կամ մի վաճառական՝ ապրանք, նա ներկայացած է իբրև յեղափոխական և արքորուած: Եթանասունից աւելին անմեղ ընտանիքներ թշուառացան նրա պատճառով: «Բայց արդեօք նորը հնից լա՛ւ պիտի լինի»...»

*

Մերսինից հաղորդում են.

«Ապրիլի 17-ին, կիրակի օր, առաւօտեան ժամը 1-ին (ըստ թրքաց), Մէրսինի բանտին մէջ թիւրք բանտարկեալները զինուած կը յարձակին հայ բանտարկեալներու վրայ, անոնցմէ երկուքը կը ըսպանեն և երեքը կը վերաւորեն: Սպանուածներն են՝ հաճընցի Բարսեղը և տարսօցի կարապետը: կ. Պօլսէն պահականու մը եկաւ Մէրսինի առաջ. տեղական կառավարութիւնը գրեթէ անտարբեր կը կենայ: Մարդասպան բանտարկեալները Ատանա տարուած են. Մէրսինի ժողովուրդը յուզուած է»:

խմբ. 99. 50, Կարմիր Խաչ 86, Պաշխուզուք 69, Աղուարդ խմբ. 72, Ժառիկ 55, Բարեկենդանի առթիւ մասնաւոր հանգանակութեան մը՝ 86. 50, Տ. Թ. 50, Գ. Գոյմաճ. 20, Ասիւծ 20, Տ. Լ. 20, Ն. Աղա. 20, Մ. Ս. Բ. 16, Աւետիս 15, Կիւլէսէր 5, Ե. Կ. 12, Միջ. Գ. 10, Ս. Օ. Խ. 8, Կտ. Օ. Խ., Թովթգ, 8. Գ., 8. Թ., Ե. Կոնստանդ 5-ական, Թորոս Օ. 8, Մօլտավան 2 Ֆր.: Ընդամենը 931 Ֆրանք:

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՕՄԻՏԷՆ՝

Շ ու մ Լ ա յ ի ենթակոմիտէն ստացնր է հետեւեալ հանգանակութեանէն զոյացած գումարի կէսը. —

Թ. Համի Ստ. 50 Ֆրանք, Ոմն 30, Մկ. Գամ. 20, Ոմն 10, Յով. Բ. 40, Բ. Սէ. 5, Եղբ. Պոյ. 40, Կ. Աճ. 20, Գ. Ե. 30, Յար. Պետ. 15, Ն. Յակ. Պեն. 5, Ա. Լ. Խաչ. 5, Գ. Թ. 10, Վն. Մ. 10, Մ. Թ. 5, Գ. Ե. Ա. 20, Գր. Թ. 10, Համի Յով. Եղբ. 8, Աք. Հաւ. 20, Թ. Հարամ. 20, Ե. Թ. 5, Նիկ. Վ. 20, Գ. Բէթ. 2, Համբ. Պ. Ե. որդի 15, Օն. Ան. 15, Ստ. Հ. 10, Ռ. Հճ. Հ. 10, Արտ. Կար. 10, Սող. Պ. 5, Արտ. Աս. 5, Մ. Ե. 5, Գաւ. Խ. 10, Ա. Մարտ. 7, Հ. Գ. 2, Մ. Լազ. 3, Կ. Պոզ. 1, Խաչ. Թ. 1, Աս. Տօն. 4, Դուրս. 2, Փէշտ. 5, Եղբ. Շ. Ե. Յ. Մար., Ն. Հաւ 5-ական, Եղբ. Գ. Մկ. 5, Կ. Շահ. 1, Ե. Հ. Մազ. 1, Կար. Գ. Մ. 2, Հճ. Սեդ. Հ. 2, Գր. Պ. 10, Մկ. Մ. 2, Մկ. Բ. Ե. Եղբ. 2, Ե. Մար. 3, Մանկ. 3, Գ. Պետ. 2, Տիգ. Ս. 3, Տիգ. Ե. 2, Տիգ. Հ. 2, Ա. Շաւ. 2, Եղբ. Հար. 20, 15, Կ. Սահ. 1, Ֆար. Ա. 2, Տ. Ծգմ. 1, Մ. Գր. 2, Գ. Ա. 5, Մ. Գէոր. 1, Սար. Ե. Օ. 50, Նազ. Կ. 1, Ներ. Բ. 1, Թ. Ման. Օ. 50, Մ. Մար. 5, Գ. Մուր. 5, Խ. Ս. Հճ. Գր. 5, Մ. Ս. Պոյ. 2, 50, Յակ. Ա. 5, Տիգ. Մ. 2, Մ. Հար. 2, Միւ. Ս. 1, Սահ. Ս. 1, Ե. Յար. 1, Լազ. Ե. 1, Ստ. Հճ. Ե. 1, Խ. Միւ. 1, Պիթիխս՝ սրճ. հայաստանցիներէ 5: Գումար 634 Ֆր. 65 սանտիմ:

Վ ա ո ն ա յ ի ԿՕՄԻՏԷՒ ԳԱՆՃԱԾ. —
Գալուստի ձեռքով Հ. 2 Ֆրանք, Երեք շահեցներ 10, Կ. Թ. 4, Գ. Գ. 4, Ա. Գ. 4, Թաղէս 10, Սպաթար խմբ. մէկ ամսավճար 6 Ֆրանք:

Տարծն խմբէն (յուշուար) 11 Ֆր., Նոյն խմբ. (փետուար) 11, Հայրիկ խմբ. (յուշուար) 11. 50, Նոյն խմբ. (փետուար) 10. 50, Ռշտունցի խմբ. (մարտ) 9, Ա. Զինէրեանի ձեռքով հանգանակ. 9. 10, Հ. Կիւմուրեանի ջրած վիճակահանութ. արդիւնք 14. 40, Հատկի առթիւ Նէր Ե. Տ. Յակոբեան 10 Ֆր.: Ընդամենը 126 Ֆրանք 50 սանտիմ:

Նախորդ շրջանի մէջ վարդօյի միջոցով ջրած հանգանակութեան ստացնր է Ռ ո լ ս շ ու շ է ն Ե Ե Շ ո լ մ Լ ա յ է ն. —

Ոսկերիչ 100 Լէվ, Ոմն Ս. 10, Պ. Փ. 5, Արծնցի 40, Հարողո 5, N° 203՝ 10, Բ. 10, Հաշունի 10, Ոմն 10, Արծի 10, Ա. Փ. 8, Վ. 5, Հ. Բ. 10, Ե. Ա. 3, Եղբարք ֆ. 30, Ե. Խ. 10, N° 3՝ 50, Արամեան 10, Ասող 10, Թագուի տղիկ 15, Հ. 10, Ե. 5, վարդօ N 15, Ե. Մ. Խամ. 5, N° 17՝ 50, Ոմն 10, Փ. Գ. 10, Սեն 30, Եղբ. վարդ. 20, Ժեփարար 50, Կեղե 5, Տէրոր խմբ. 35, Լազ 5, Թաթուլ 30, Ե. Սայեան 20 Լէվ: Ընդամենը 634 Լէվ:

ՈՍԿԵՅԱՆՔԻ ԿԵԴՐ. ԿՕՄԻՏԷՆ՝

1903 թի 14 մայիսէն ց՝31 դեկտ. 1903 թի. —
Վահագն 33 դուրուշ (փոխ դրամ), Որոտ խումբ 75, Խիզակ 42. 75, Միր Կարօի ձեռամբ Պոտօէն 99, Սեպուհ երկու անգամէն 99, Ծակատ երեք անգամէն 24. 50, Անձանթ 66, Կ. Խ. 14, Խիզակ 41. 50, Նոր-գիւղէն 198, Սարհատ խումբ 80, Արիւն խումբ 123. 50, Արսէն 82. 50, Սեպուհ 99, Լազար խումբ N° 2939՝ 99, Համակիր N° 2940՝ 534, Համակիր օրիորդ N° 2941՝ 356, Արմաիր 35, Կայծակ երկու անգամէն 30. 50 դրշ. փոխ:

N°		N°		N°	
2950	356 դրշ.	2944	356 դրշ.	2931	468 դրշ.
2932	312 դրշ.	2933	712 դրշ.	2934	312 դրշ.
2935	156 "	2948	712 "	2946	356 "
2936	312 "	2937	267 "	2942	1068 "
2947	1068 "	2945	356 "	2938	356 "
2949	156 "	2959	99 "	2960	156 "
2943	1068 դուրուշ փոխ:				

Ա Ր Ե Ի Մ Տ Ե Ա Ն Բ Ի Ի Ր Յ Ի Փ Օ Ս Ս Ա Ր Կ Ղ Ը

ՌՈՒՄԱՆԻԱ. — Միշու ՊՕԼՈՍԵԱՆ. Զեր նամակին չենք կարող պատասխանել քաղաքի ամուսնը անընթեանելի լինելու պատճառով:

Մ. Գ. — Ընկերներին. Զեր զլխաւոր պահանջը կատարում է աշողութեամբ: Սպասում ենք նամակներ: Սիսեցուն շտապեցէք:

ՈՍԿԱՆԱՊԱՏ. — Կ. ԿՕՄԻՏԷՆ. Ուղարկում են ձեզ կորոններ: Զեր ջոլոր ծրարները ստանում ենք կանոնաւոր կերպով: Շարունակեցէք անընդհատ:

ՋՐԱԲԵՐԴ. — ՀԱՅԿՈՒՆՈՒՆ. Վրէժեանի միջոցով մէկ ու կէս ամիս առաջ ուղարկւած են ձեզ ուզած գրքերն ու թերթերը: Տեղեկութիւնները փութացէք:

ՄՐԳԱՍՏԱՆ. — Կ. ԿՕՄԻՏԷՆ. Զեր ուզած հրատարակութիւնները ուղարկւած են:

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Ս. ՎԱՐԱՆԴԵԱՆԻ

„ՀԱՅՐԵՆԻՔԻ ԳԱԼՍՓԱՐԸ“

Գիւնը 1 Ֆրանկ

Գիւնը՝ Rédaction du „Droschak“, Genève (Suisse)

„ԳՐՕՇԱԿԻ“ Տ Ա Ր Ա Ծ Մ Ա Ն Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր Ը

„Գրօշակի“ վերաբերմամբ ընդհանուր ժողովը կարգադրել է՝

- 1) „Գրօշակը“ ձրի տարածել միմիայն թիւրքաց Հայաստանում և թիւրքիայում:
- 2) Այդ սահմաններից դուրս՝ վերացնել մինչև այժմ գոյութիւն ունեցող անվճար ձեւը նշանակել բաժանորդագրութեան ձեւով և հետեւեալ կերպով՝ Ռ ո լ ս ա շ ու շ է ն և Կ ո վ կ ա ս ՝ 2 ուրբի. Պ ա Ր Ս Կ ա ս տ ա ն ՝ 1 թուման. Ա մ եր ի կ ա ՝ կէս դոլար Եւրոպա և մնացած երկրներում՝ 3 Ֆրանք տարեկան:
- 3) Այն տեղերում, ուր գոյութիւն ունեն „Դաշնակցութեան“ կոմիտէներ, „Գրօշակը“ տարածում է վերջինների միջոցով որոնք և պարտաւոր են գանձել տարեկան վճարը և ամբողջութեամբ, համաձայն տարածուող համարների քանակի, հասցնել Արեւմտեան Բիւրօյին:
- 4) Կոմիտէ չեղած տեղերում մասնաւոր անձինք, „Գրօշակը“ ստանալու համար՝ պէտք է դիմեն խմբագրութեան՝ կանխիկ ուղարկելով տարեկան վճարը:

„Գրօշակի“ վերաբերեալ այս որոշումները գործադրութեան մէջ են մտել ապրիլի համարից սկսած: